

1895

2010

214  
1146  
ՎԻ  
ՊԵՐՁ ՔԱՐԱԶՆԵՐ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ)



Գ. Բ. 8

ԷՄՄԱՆՈՒԵԼ Քահ. ԽԱԶԱՐԵԱՆՑ

— ( ԱռԵՋԱՆ ԳՐԲԱՑԻ ) —

ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽԻՔ ՄԱՆՈՒԿ Ա.Պ.ՅԻ ԿԱՐԱ-  
ՊԵՏԵԱՆՑ ՏԵՐԻՄ ՕՂԼՈՒԵԱՆՑ, ԱՐՄԱԿԻՔՑԻ



Տպարան Մայթ Աթոռոյ և Եղմածնի

1895

203.7  
6-15

«Изъ языка» письма отца к сыну (—) Пётру Петрову.

203.7 up.  
G-15

1148.

22d. 1896

pp. 81 fm.

# ՊԵՐՋ ՔԱՐՈՉՆԵՐ

57




ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(1007  
32 354 )  
17014-58




3 P B 8

ՄՄԱՆՈՒԻԼ Քան. ՆԱԶԱՐԵԱՆՑ



ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽՏԻՔ ՄԱՆՈՒԿ-ԱՊԱՑԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ  
ՏԵՐԻՄ ՕՎԼՈՒԵԱՆՑ, ԱՐՄԱՆԻՑ

2001



Յասրան Մար Աթոռոյ ս. Էջմիածնի

1895





Եւ դու քարոզեա զբանն, հաս ի վերայ ժամու  
եւ տարաժամու. յանդիմանեա, սաստեա, միմիթարեա  
ամենայն երկայնամոռովեամբ եւ վարդապետովեալը:

Առ. Տիմոֆ. Երև. Դ. 2:

ՀՐԱՄԱՆԱՀ

Տ. Տ. ՊԿՐՏՀ

ՎԵՀԱՓԱՆԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ

100



\*

Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ

Սրբազնագոյն կաթողիկոսին.



Վեհափառ Հայր,

Թէ կեանքիս մէջ ունեցել եմ միերկու նշանատրօր օր, ապա տարույն յունուարի 15-ը նրանց մէջ ամենանշանատր տեղն է բռնում։ Այդ օրը բարդ ունեցայ հայոց մեծ չայրապետին ներկայանալու։ Ի՞նչ վսեմ բռագեներ էին ժամանակի այն փոքրիկ մնար, որ վիճակուեց ինձ Լուսատրչի վերջին գահակալին լսելու համար։

Տէ՛ր, Դուք ինձ երջանկացրիք, արժանացնելով սօծութեանդ բարձրագոյն ուշադրութեանը։ Այդ երջանկութիւնը պատրաստել էր ինձ համար իմ «Զարչարանքի Շաբաթը», որ առանձին համանութիւն էր զտել «Յիսուսի Վերջին շաբաթուայ» մեծ չեղինակից։

Այսօր ահա՝ աստուածընտիր չայրապետի Վեհափառութեանդ հրամանով արդէն կազմած լինելով աւետարանական իմաստներից «ՊԱՐՁ ՔԱՐՈՉՆԵՐ» անունով իմ առաջին գրքոյկը, պատիւ ունեմ որդիական ամենախոնարհ ակնածութեամբ մատուցանելու Վեհիդի ի տնօրէնութիւն։ Թո՛ղ հնքը՝ երկնային քարոզիչ Յիսուս ուղղէ նուաստիս մտքերը՝ ոյժերիս ներածին չափ որ սուրբ անունը երկրիս վրայ փառատրելու։

Վեհափառութեանդ ամենանուաստ պաշտօնեայ  
Է. ք. Նազարեանց.

15 Փետրուարի 1895  
Թեֆւես.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ա. «Զամենայն, զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս եւ դուք արարէք նոցա...»
- Բ. «Մի զանձէք ձէզ զանձս յերկրի, ուր ցեց եւ ուտիծ ապականեց, եւ ուր գողք ական հատանեն եւ գողանան»:
- Գ. «Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ չայրն ձեր երկնաւոր կատարեալ է»:
- Դ. «Շաբաթ վասն մարդոյ եղեւ, եւ ոչ եթէ մարդ վասն շաբաթու»:



ԱՅՍ ԳՐՈՒԱՃՔԻՍ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԻՆ.

Մի ժեմկ ժնթերցող.

**Ա**մենքիս յայտնի է, որ մենք հայ-քրիստոնեայ ենք, այսինքն՝ Քրիստոսին հաւաքացող ու հետեւոց: Հաւատալով՝ այս, հաւատում ենք, որովհետեւ առանց Քրիստոսի՝ չկայ յոյս, չկայ միւս կեանք, չկայ երկինք, չկայ Աստուած. այլ միայն փոշի՝ արտասուքով թրջուած: Հաւատում ենք որ Նա Ասաուած է և Աստուծոյ Որդի: Հաւատում ենք, որ Նա մեր փրկութեան համար՝ իր Հօր ծոցը թողեց, երկնքի անհասանելի բարձրութիւնից խոնարհեց՝ երկիր եկաւ, իր աստուծութեան հետ մեր մարդկութիւնը խառնեց, մեզ եղայր գարձաւ, որ մի օր մեզ էլ բարձրացնի, Աստուծոյ

որդի շինի։ Նրա համար նա՝ մարդացած Աստուածը՝  
ամբողջ երեք տարի քարոզեց, խրատեց իր ժամա-  
նակուայ մարդկանց, սովորեցրեց նրանց այն ամեն  
բանը, ինչ որ հարկաւոր էր նրանց և մեր ամենիս  
համար, և բաց արեց մեր առաջ այն ճանապարհը,  
որով պէտք է գնանք յաւիտենական կեանքը, այն  
երանելի կեանքը։ «որ մարդուս աչքը չէ տեսել, ականջը  
չէ լսել և ոչ ոքի մաքովն էլ չէ անց կացել, մի խօս-  
քով՝ այն երջանիկ կեանքը, որ Աստուած պատրաստել  
է իր սիրած մարդկանց համար»։

Ասացի՝ հաւատում ենք այս բոլորին. բայց միայն  
հաւատալը բաւական չէ. պէտք է և հետեւենք. այս-  
ինքն՝ ինչ որ մեր Տէր Յիսուս Քրիստոս խօսքով քա-  
րոզել է, աշխատել է մեր ականջներումը հալել. — այն  
մենք գործքով պէտք է կատարենք։ Եթէ ոչ՝ դատարկ  
հաւատը՝ առանց գործքի՝ մեռած հաւատ է։ Առաք-  
եալն էլ այսպէս է խրատում։ «Ի՞նչպէս որ, ասում է,  
մարմինը՝ առանց հոգու մեռած է, այնպէս էլ հաւա-  
տը՝ առանց գործքի՝ մեռած է»։ — Բայց մենք ի՞նչպէս  
կարող ենք կատարել Քրիստոսի ասածները, եթէ  
չգիտենանք թէ նա ինչեր է ասել։ Նրա ասածներն էլ  
վաղուց կմոռացուէին, եթէ իր աշակերտները չգրէին  
Սուրբ Հոգւով։ Նրանց գրածները յետոյ մեր սուրբ  
Հայրապետները հաւաքեցին մի գրքի մէջ, որին անու-  
անեցին Առեւտարան, այսինքն՝ մէկ այնպիսի գիրք, որի  
մէջ մեր վրկութեան համար «աւետիք» կայ, մեզ  
«աչքալոյս» կայ։

Աշխարհիս երեսին չէ լսուած մէկ այնպիսի ճըշ-  
մարփու, իմաստուն խօսք, որ գրուած չինի Աւետտ-  
րանում։ Եւ Աւետտարանը չի կարելի ուրիշ գրքերի պէս  
կարդալ։ Նրան կարգալիս պէտք է մոռանաս աշխարհը  
և ինչ որ կայ նրա մէջ. պէտք է փակես աչքերդ՝  
չորս կողմիդ բաները չտեսնելու համար. պէտք է  
կալնես ականջներդ՝ դրսի ձայները չլսելու համար։  
Մարմնիդ աչքերը փակելուց յետոյ՝ պէտք է լայն բաց  
անես հոգուդ աչքերը, ինքդ պէտք է մտնես քո մէջ,  
և բոլորովին ուշք ու միտք դարձած՝ պէտք է խրուես,  
մտնես նրա խօսքերի, նրա մտքերի մէջ, ինչպէս այն  
մարդը, որ մտնում է ծովի յատակը՝ մարգարիտներ  
վնտուելու համար։ Աւետտարանի ամէն մի խօսքը մի  
ահագին խրատ, մի անգին մարգարիտ է նրա գինն  
իմացողի համար։ Աւետտարանի խօսքը մեղրից աւելի  
քաղցը է, կարագից աւելի սննդարար։ «Ճաշակեցէք  
և տեսէք՝ ինչպէս քաղցը է Տէրը»։ Չէ հարկաւոր,  
որ անպատճառ Աւետտարանի բոլոր խրատները անգիր  
գիտենանք. բաւական է, որ նրանցից միայն մէկի զօ-  
րութիւնն իմանանք. — որ կարողանանք մեր կեանքը  
Քրիստոսի ուղածի պէս կառավարել այս աշխարհում։  
Այդ՝ խրատների ծովից մի քանի կամիլ ջուր էլ որ  
վեր առնենք, մեզ բաւական է։ «Աւետտարանի խօսքերը  
ճրագ են մեզ համար և լոյս են տալիս մեր ճանա-  
պարհներին»։ Երբ քահանան Աւետտարանը կարգում  
է, ինքը չէ որ խօսում է. Աստուած է խօսում։  
«Ասէ Աստուած»։ Այս է պատճառը, որ ժողովուրդը

ոտքի է կանգնում՝ Աստծուն լսելու համար:

Եկեղեցում ամէն օր կարդացուում է Աւետարանը, բայց ամենքը չեն ականջ դնում լսում. լսողների էլ տասից մէկը հազիւ է հասկանում. հասկացողներից շատ քչերն են մտքումը պահում. մոքումը պահողների էլ հարիւրից մէկը հազիւ է լսած՝ պահածը կատարում. Նրա պատճառն այն է, որ «աշխարհի հոգսերը, փառք ու պատուի ետևից ընկնելը» մեզ այնպէս են կապել կաշկանդել, որ մենք փոխանակ այս աշխարհի տէրը դառնալու՝ սրա ծառան, սրա ստրուկն ենք դարձել: Բոլորովին մոռացել ենք, որ մենք այնքան այս հողեղէն աշխարհի համար չենք ստեղծուած, ինչքան մէկ ուրիշ՝ հոգեղէն աշխարհի համար: Բայց մեր հոգին դատարկ է, մեր սիրաը ցամաքած, այս պատճառով Քրիստոսի այն խօսքերը, որ պէտք է մեր հոգին թևաւորէին, մեր սրտի թելերը թրթոցնէին,—մեր սրտի պատերին հասնելիս այնպէս են սառչում կորչում, ինչպէս հրացանից արձակուած գնդակը սառչում ու կորչում է աւազուտ անապատում: Եթէ մենք այդ խօսքերի միտքը լաւ հասկանանք, եթէ մենք նրանց տեղ տանք մեր սրտումը, այն ժամանակ գրանք կը մտնեն մեր սիրտն ու հոգին, ինչպէս անձրսի կաթիլները ծծւում են դաշտերի կոշտացած հողում:

Յիսուս Քրիստոս շատ ու շատ ընտիր խօսքեր է ասում իր ս. Աւետարանի մէջ,—մէկը միւսից աւելի իմաստուն, մէկը միւսից աւելի հոգեշահ խօսքեր. այնպէս որ եթէ մէկը ուղենայ նրանցից ամենալաւն ու

գեղեցիկն ընտրելու—ամենալաւն ու գեղեցիկը միշտ ընտրելու կը մնայ, որովհետեւ նրա բոլոր խօսքերը աստուածային խօսքեր են: Նրա ամեն մի խօսքը այն սանդուղքի մի ոտքը՝ մի աստիճան է, որի մի ծայրը երկնքումն է, միւսը՝ երկրումը: Նրա ամեն մի խօսքը մի աստիճան մեզ մօտեցնում է երկնքին, և բոլորը միասին մեզ մտցնում են երկինքն ու երկնային արքայութիւնը, թողնելով որ վայելենք այնտեղ յաւիտենական կեանքը: Երբ մէկ անգամ Յիսուս պարզապէս ասեց իր աշակերտներին՝ որ իր թագաւորութիւնը երկնքումը պէտք է լինի, ոչ թէ երկրումը, ինչպէս իր միամիտ ու փառասէր աշակերտներն էին կարծում—նրանցից շատերը թողին նրան ու հեռացան, այն ժամանակ իր մօտ մնացող աշակերտներին հարցրեց. «Միթէ դուք Էլ էք կամենում գնալ»: Արան Պետրոս առաքեալը պատասխանեց. «Տէ՛ր, դույաւիտենական կեանքիցն ես խօսում: մենք ում մօտ պէտք է գնանք»: Այդպէս էլ մենք, այդ սանդուղքի գլուխը հասնելու համար՝ պէտք է մնանք Յիսուսի մօտ:

Բայց Քրիստոս իր ս. Աւետարանի մէջ մեզ եղբայրաբար խրատելով և ընկերաբար համոզելով չէ բաւականանում: Այլ նա ճշմարիտ ուսուցչի պէս՝ զգուշացնում էլ է մեզ. ցոյց է տալիս, որ մենք վերջը պատասխան պէտք է տանք Նրան իր տուած խրատները մտքներում չպահելու և իր կամքը ընկատարելու համար: «Այն խօսքերը, ասում է Նա, ինչ որ ահա այս աշխարհում ձեր ականջներումն ուղում

եմ հալել, հենց այն խօսքերը ձեզ կը դատեն ու կը դատապարտեն միւս աշխարհումը, որտեղ Ես իբրև դատաւոր՝ հաշիւ կը պահանջեմ ձեզնից»:

Այս պատճառով ահա այսուհետեւ Ես խօսելու եմ քեզ հետ աւետարանական խրատներից, որ տեսնես՝ թէ ինչ իմաստութիւն կայ թաքնուած Յիսուս Քրիստոսի ասած պարզ ու հասարակ խօսքերի մէջ:

Է. ք. Ն.

Բ Ա Ն Ա.

1. Զամենայն, զոր միանգամ կամիջիք՝ թէ արացեն ձեզ մարդիկ, այնպէս եւ դուք արարէք նոցա:
2. Զի այս իսկ են օրէնքն եւ մարզարէք:

Մատթ. Է. 12:



Ենք մեր կեանքում շատ բաներ ենք անում: Բայց կայ այնպիսի բան, որ պէտք է անենք— չենք անում կայ էլ այնպիսի բան, որ պէտք է անենք— անում ենք: Մենք ոչ մեր անելու բաների օգուտն ենք հասկանում: Ոչ էլ՝ չանելու բաների վնասը. և շատ անգամ լաւը վատի տեղն ենք ընդունում: Վատ անում ենք ոչ թէ այնպէս, ինչպէս մեր Տէր Յիսուսն է կամենում, այլ՝ ինչպէս մենք ենք հասկանում:

Մեզնից հազարաւոր տարի առաջ՝ Խրայէլացի ժողովուրդն էլ՝ երեսը Աստուծուց գարձրած՝ ամեն

քան իր հասկացողութեամբ էր անումն որ Աստուած մէկը միւսի ետևից՝ նրան խրատելու համար մարգարէներ ուղարկեց։ Այդ մարգարէների ձայները կտրուեց նրանց խրատելով՝ բայց նրանք մազի չափ էլ չուղղուցին։ Եկաւ Քրիստոս, և ամէն բան գտաւ տակն ու վրայ եղտծ։ Ժողովրդի բարքը փշացած, Աստուծու պատուիրանքները մնուացուած, սուտն ու կեղծը ալրտներումը արմատացած։

Արգեօք Քրիստոս որ մեզ մօտ գայ, Խորայէլացիներից աւելի լաւ կը գտնի մեզ։ Մեզ, որ իր աւետարանի լուսով լուսաւորուած և իր սուրբ արիւնով մեղքի գերութիւնից ազատուած ենք։ Ինչով ենք մենք նրանցից աւելի։ Մեր ո՞ր գործքով կարող ենք պարծենալ նրանց առաջը։—Ո՛չ մի գործքով։ Մենք էլ մեր երեսը այնպէս ենք դարձել Քրիստոսից, ինչպէս Խորայէլացի ժողովուրդը՝ իր Աստուծուց։ «Այս ժողովուրդը, ասում էր Յիսուս, շրթունքներով, դատարկ լեզուով է պաշտում ինձ։ իսկ իրանց սրտերը շատ հեռու են ինձնից»։ Այսօր 1900 տարի անցնելուց յետոյ այս միւնոյն խօսքերը պակաս են սազում մեզ։ Մեր բերանում անգագար կրկնուող «Աստուած, Քրիստոս, Խաչ, Աւետարան», խօսքերը որ և իցէ նշանակութիւն ունեն։ Հաստատում են որ մենք քրիստոնէութիւնը։ Միթէ նրանցից՝ որ տարին միւնքու անգամ եկեղեցի ենք գնում։ Երեսներս խաչ հանում, ծունք գնում։ մոմ վառում։ խունկ ծխում, պաս պահում։

Մենք մեր ո՞ր գործքով փառաւորեցինք Յիսուսի անումը։ Նրա տուած հազար ու մի խրատներից ո՞րը մեր ականջի օղ շինեցինք։ Նրա քարոզած ճշմարտութիւններից ո՞րը մեր կեանքի համար կանոն շինեցինք։ Մեր ո՞ր պակասութիւններն ուղղեցինք, մեր ո՞ր թուլութիւններին յաղթեցինք։ Ոչինչ չենք արել, ոչինչ չենք սովորել։ Դեռ աւելին կասեմ։ մենք այսօր հրէաներից էլ յետ ենք մնացել։ Ի՞նչպէս։ Նրանց քարոզեցին 16 մարգարէներ, մեզ քարոզեցին ու քարոզում են 12 առաքեալներ, 72 աշակերտներ, հարիւրաւոր հայրապետներ, հազարաւոր նահատակներ։ Մենք Աւետարան ունենք, նրանք չունեն։ Նրանք Քրիստոսին խաչեցին՝ չհասկանալով։ մենք խաչում ենք նրան հասկանալով։ ԶԵ՞ս որ՝ «Ո՛ւմը շատ է տուած, նրանից շատ կը պահանջուի»։

ԹԷ նրանք, թէ մոնք—օրէնքի հոգին թողել՝ նրա տառը, նրա խօսքն ենք ձեռք առել։ ԹԷ նրանք, թէ մենք—եկեղեցի ենք գնում՝ ձեփ համար, աղօթում ենք՝ ձեփ համար, պաս ենք պահում՝ ձեփ համար։ Աւետարանը մեզ ասում է՝ աղքատին պէտք է ողորմութիւն տանք. մենք չենք տալիս։ Եթէ տալիս էլ ենք —ուրիշներին ցոյց տալու համար ենք տալիս։ Աւետարանը մեզ ասում է՝ պէտք է աղօթք անենք. մենք չենք անում. եթէ աղօթում էլ ենք—միտքներս ոչ թէ մեր աղօթքի, մեր խնդրուածքի վրայ է, այլ՝ եկեղեցուց դուրսը։ Աւետարանը մեզ ասում է՝ պէտք է պաս պահնք. մենք պաս չենք պահում։ Եթէ պահում էլ ենք

—մենակ կերակրեղէնի պասն ենք պահում: Մենք տարին մի անգամ չենք խոստովանում: Եթէ խոստովանում էլ ենք, ոչ թէ մեր մեղքերն ենք խոստովանում: այլ քահանայի առաջներն ենք կրկնում: Մենք չենք ճաշակում: Եթէ ճաշակում էլ ենք, ոչ թէ այն պատճառով, որ ճաշակուելու մի առանձին կարիք ենք ըզգում: այլ որ՝ ուրիշներն էլ են ճաշակում: Արանից ի՞նչ է դուրս գալիս:—այն՝ որ մենք շատ քիչ ենք զանազանուում կեղծաւոր փարիսեցիներից: Ոչինչ բան չենք անում՝ հասկանալով: ամէն բան միայն ձեի համար ենք անում:

Բայց, եթէ մենք մարդ ենք կատարեալ, եթէ քրիստոնեայ ենք ճշմարիտ, մէկ մտածենք, թէ՝ ի՞նչի համար ենք աշխարհ եկած, ունի՞նք մի բարձր նպատակ, համնում ենք այդ նպատակին: Միթէ մենք նրա համար ենք աշխահ եկած, որ ամեն մէկս միայն մեզ վրայ մտածենք, մեր ապրուստը հոգանք, մեր կեանքը ապահովենք: Մեզ պէս հազարաւոր մարդկանց հետ ենք ապրում ու նրանց մէջը պտըւտում: Միթէ գէպի այդ մարդիկը մենք ոչինչ պատրքեր չունե՞նք կատարելու: Հայր ենք՝ ընտանիքի մէջ, ազգակից ենք՝ մօտիկ շրջանի մէջ, ընկեր ենք՝ մոտերիմների մէջ, անդամ ենք՝ հասարակութեան մէջ, որդի ենք՝ հայրենիքի մէջ, մասն ենք՝ մարդկութեան մէջ:—միթէ ոչինչ կապերով կապուած չենք այս ամենքի հետ, ոչինչ պարտքեր չունե՞նք կատարելու որանց վերաբերմամբ: Կարելի է, դու ի՞նձ հարցնես թէ՝ այդ ի՞նչ

պարտքեր են, որ զրուած են ինձ վրայ: Այդ պարտքերը, սիրելիս, գրուած են Աւետարանի ամէն մի երեսում: զրուած են նրա ամէն մի տժում: Այստեղ դժուարն այն է, որ մենք չենք կարող ըոլորը մի տեղ հաւաքել ու միշտ մեր աչքի առաջն ունենալ: Այս բանը շատ լաւ գիտէր ի՞նքը՝ մեր պարտքերը հասկացնող Յիսուսը: Նա շատ լաւ գիտէր, որ մենք իբրև հողեղէն արարածներ, աշխարհի ունայն հոգսերի մէջ խրուած մարդիկ՝ շււտ կը մոռանանք իր տուած խրատները: Այս պատճառով Նա իր բոլոր ասածներն ու ասելիքը հաւաքեց այս մէկ խրատի մէջ: «Այն ամէնը, առաջ է, ի՞նչ ո՞վ ո՞վո՞մ է+ ո՞վ ա-ըէլլե՞լը յե՞լ անէն, դու+ էլ այն ալէ+ նրանց»: Ի՞նչ կարճ խօսք, բայց ի՞նչ երկար միտք: Մէկ միտք, որ ոչ թէ մարդիկ, այլ ամբողջ ազգ կարող է կառավարել: Ահա երկու խօսք, որ ամէն մարդ, ամէն հայքրիստոնեայ կարող է իր կեանքի կանոն շինել: Դա մէկ այնպիսի խօսք է, որ միշտ կը զարթեցնի մեր թմրած խիզճը, մի խօսք՝ որ միշտ կը կակզացնի մեր քարացած սիրոը, կը տոքացնի մեր սառած հոգին: Այս կարճ խօսքը մի նեցուկ է մեզ համար այն սմէն ժամանակ, երբ մեր ստքը սաշելու լինի: Աս մի վառած լապտեր է, որ կը լուսաւորի մեր կեանքի գար ու փոս ճանապարհները: Այս կարճ խօսքը մի ազգարար ձայն է, որ ամէն հարկաւոր ժամանակ կը լիշեցնի մեզ մեր պարտքը: Կարելի է, դու ուզում ես աւելի մօտիկից տեսնել այդ խօսքի

12014-58

1007  
(32354)



ոյժը. ահա ցոյց տամ քեզ:

Տես՝ այս մարդը ապրելու համար հաց չունի. իսկ դու այսօր մի քանի տեսակ կերակուր ես ունենալու քո սեղանի վրայ: Հիմա դու մոռացիք քո լիութիւնը և մտիր նրա չքաւորութեան մէջ. այնպէս համարիր թէ՝ ցամաք հացի կարօտը դու ես. Աստուծոյ բարութիւնով լցուած սեղանի տէրը նա է: Ի՞նչպէս է. լաւ օրումն ես, դուք է գալիս քեզ այդ թշուառութիւնդ: Տես՝ մէկ օր չէ, երկու օր չէ—սմբող կեանքդ, կնոջ ու որդկերանցդ հետ այդպէս սե օրում պէտք է անցկացնես: Ի՞նչ է, շատ նեղ տեղն ես: Ի՞նչ կը կտմենաս, որ այն առատ սեղանի տէրը քեզ անի: Գիտեմ՝ սիրտգ շատ բան կուզի. բայց այս անգամ քչովն էլ կը բաւականանաս: Անկասկած դու կուզես որ նա քեզ մի կտոր հաց և մի բաժին տաք կերակուր տայ: Հացի Տէրը, աշխարհի համար առատ սեղան բաց անող Աստուած աշքը քեզ վրայ է գյել: Լիութիւն ու բարութիւն բաժանող Յիսուս ասում է քեզ. «Տեսար թշուառութիւնը. դէհ հիմա տուր այդ խեղճին իր ուզածը. էլ մի սպասիր որ նա ձեռքը դէպի քեզ մեկնի, կարելի է՝ ամաջում էլ է: «Թէ նրան տաս, թէ ինձ,—միւնոյն է»:

Տես՝ այս մարդը այս ձիւն-ձմեռ օրով մարդուս թուքը սաւցնող ցրտերին, բարակ ու ցնցոտի հագուստի մէջ կծկուած, ծեռքերը բերանով տաքացնելով ով գիտէ՝ մի կտոր փայտի, մի պարկ իս-լուէ ետե ից է ման գալիս՝ իր խուցը տաքացնելու: Իսկ

դու, տաք սենեակումդ, փափուկ բազմոցիդ վրայ թեկն ընկած՝ ստանալու փողերիդ հաշիւն ես տեսնում: Յող Աստուած մէկդ հազար անէ, բարզվ վայելիս: Միտք է՝ առաջուայ կեանքդ. ով էր քեզ մարդատեղ դնում: Երեսիդ նայողն ով էր, պարտքով ապրելով՝ հոգիդ դուրս էր գալիս: Ոչինչ էիր՝ ահագին կարողութեան տէր գարձար: Դու վայելում ես Աստուծոյ ստեղծած կրակի ջերմութիւնը՝ մէկը տամնով, մէկը հարիւրով. դու ծիծաղում ես դրսի սառնամանիքի վրայ և վառարանիդ փայտն աւելացնում: Իսկ դուրսը, սառուցով պատած աշխարհը այդ թշուառի լերգն ու թոքը սարսուցնում է: Հիմա մի բոպէ քո վիճակը փոխիր զրա վիճակի հետ: Ի՞նչ դառն է, նիշ անտանելի,— մերկ գետին, սառած պատեր, անկրակ օջախ, տկլորչիլախ երեխաներ, տարակուսուած մայր, անօգնական հայր. իսկ ձիւնը բրդում է ու բրդում: Ասա տեսնեմ՝ Բնիչ կը կամենաս որ այն մեծատունը քեզ անի: Անկասկած, կասես՝ ինչ լաւ կը լինէր, որ այս բաղդաւոր մարդը մի քիչ հին-մին շոր տար ինձ, կամ մի քանի կտոր փայտ: «Տուր դրան, տուր. ասում է Յիսուս, տուր՝ ինչի որ կարօտում է. զրա մերկութիւնը որ ծածկես, զրա սառած երեխաներին որ քիչ շնչի բերես,—ես այնպէս կը համարեմ՝ թէ ի՞նձ ես հագցնում: Ի՞նձ ես տաքացնում»:

Ահա այս ողորմելի մարդը, իր առաջուայ բարձրութիւնից ընկած, հարստութիւնից զրկուած՝ այսօր կրծքի տակից ծանր հառաջանք՝ քթից մուխ հանելով\*

իր սև օրն է ողբում: Ամբողջ օրը պարապ, քաղաքի փողոցներն է քափում: առաջուայ բարեկամների ու ծանօթների երեսին չէ կարողանում նայել ամէնքի մօտ կուչ է եկել, վոքրացել, գետնին հաւասարուել: Մի քանի կոպէկ է ուզում՝ մի գործի կպչելու, չէ ճարում: Խոկ դու հազարդ հազարի վրայ դրած՝ գէպի բանկն ես շտապում և այդ թշուառի մօտովն անցնում ես, իբր թէ դրան ամենելին տեսած չը լինես: Չես յիշում՝ քանի քանի ճոխ սեղանների վրայ դրա կենացն» ես առաջարկելու ահա դա, վայ դրա կեանքին»: Մի շտապիր, կանգնիր մի րոպէ. քեզ դրա տեղը դիր: Ի՞նչ կուզէիր, որ այդ վաղածանօթ մեծատունը քեզ անէր: Երեխ, դու կը կամենայիր որ դա քեզ իր գործերից մէկի վրայ կանգնեցնէր, թէկուզ, ամենահասարակ գործի վրայ: Կուզէիր որ քեզ ձեռք տայ, սիրտ տայ, հոգի տայ, ընկած տեղիցդ բարձրացնի, որ քո վլուող տունը կանգուն մնայ, որ ձեռքիդ նայող ընդանիքդ մի քիչ շունչ առնի: Ուրեմն, «դու էլ զրան այդպէս արա»: ասում է քեզ Յիսուսի այս փրկարար խրատը:

Տես, մի խումբ ցած մարդիկ, նախանձելով այս աղնիւ մարդու բարի անուան վրայ, սև գոյներով են ներկում նրան իր իշխանաւորի առաջը՝ նրա աչքից գցելու համար: Քո խօսքը գին ունի իշխանաւորի առաջը և հեռու կանգնած՝ թամաշայ ես անում: Դիր քեզ նրա տեղը, որ զուր բամբասուումէ: Ի՞նչ կը կամենայիր որ նա քեզ անէր: — Անկասկած դու կը կամենայիր որ նա քեզ պաշտպանէր իշխանաւորիդ առաջը,

կուզենայիր որ քո մաքուր, անբիծ անունը իր բարձրութեան վրայ մնար: Ուրեմն դու էլ նրան այնպէս արա: Ահա ամէն այսպիսի ժամանակ դու և քեզ հետ աշխարհը կը զգայ իր վրայ Յիսուսի այն մեծ խրատի զօրութիւնը, որ ասում է. «Ի՞նչ որ ուզում էք որ ուրիշները ձեզ անեն, դուք էլ այն արէք նրանց»:

Բայց այս խրատը ուրիշ խրատների նման չէ: սա երկու բերնանի թուր է, աջ էլ է կտրում, ձախ էլ: Եթէ այս խրատը հակառակ մոքով հասկանանք, էլի մի և նոյն օգուտները կստանանք: Մեզ շրջապատող մարդկանցից գէպի մեզ կամ օգուտ է գալիս, կամ վնաս: Մէկը ցանկանում ենք, միւսը չենք ցանկանում: Ո՞րն էլ գալու լինի մեզ վրայ, ինչին որ կարօտ լինեն ուրիշները, ինչից որ ազատուել ուզենան, միշտ այս խրատը ամենքին օգնութեան կը հասնի: Ահա այսպէս եթէ այս խրատը հակառակ մոքով քննիենք, կը ստանանք միւս, սրան հաւասար խրատը: «Այն ամէնը, ինչ որ չէ սպառ, որ ուրիշները ձեզ անեն, դուք էլ չ'չ' անչ նրանց»: Դու չես կամենայ, որ ուրիշը քեզ զրկի, տանջի, հալածի. չես ուզի, որ ուրիշը քեզ խարի, անպատուի, գտաւաճանի: — «դու էլ ասում է քեզ մի և նոյն խրատը, ուրիշին մի զրկիս, մի տանջիր, մի հալածիր, մի խարիր, մի անպատուիր, մի գաւաճանիր»:

Ահա թէ, սիրելիս, ինչ պարտքեր են դրուած քեզ վրայ, ինձ վրայ ու ամենքի վրայ: Այս պարտքերը դրուած են թէ առաջին հարստի և թէ վերջին

աղքատի վրայ: Ո՞չ ոք չէ ստեղծուած նրա համար, որ  
միայն իր օգտի համար ապրի: Ո՞չ մէկս այն պատճա-  
ռով չենք զարդարուած բանականութեան պսակով, որ  
մեր կեանքը օգուտ չը բերի ուրիշներին: Եւ եթէ  
մեր կեանքը օգուտ չէ բերում ուրիշներին, նշանա-  
կում է՝ մենք իբրև մարդ՝ մեռած ենք: Ի՞նչպէս որ  
կան կենդանիներ՝ մեռածների մէջ, այնպէս էլ կան  
մեռածներ՝ կենդանիների մէջ: Երբ որ մենք կարողա-  
նում ենք զանազանել բարին չարից, ձշմարիտ ստից,  
— դրանով մենք պարտական ենք մնում երկրիս վրայ  
մարդու առաջը՝ երկնքումը Աստուծոյ առաջը: Եւ  
եթէ մենք, այսքանը հասկանալով չօգնենք միմեանց,  
այն ժամանակ մարդկային ազգը շուտով կը վերջանայ,  
կը ջնջուի աշխարհի երեսից, և աշխարհս կը դառնայ  
առաջուայ պէտ՝ «Երկիր աներեսոյթ և անպատրաստ»:

Սկսած այն ուրախ րոպէից՝ երբ մայրը իր մա-  
նուկը փաթամթում է խանձարում; մինչեւ այն ախուր  
րոպէն՝ երբ մէկի ձեռքը սրբում է մեռնողի երեսից  
մահուան քրտինքը! — այդ բոլոր ժամանակը մեզնից ոչ  
ոք չի կարող ապրել աշխարհում՝ առանց միմեանց օգ-  
նելու: Այս պատճառով, ամէն մարդ, ով որ կարօտ է  
օգնութեան՝ ոչ թէ պէտք է խնդրի, աղաջի, այլ իրա-  
ւունք սւնի օգնութիւն պահանջելու ամենքից: Եւ ով  
որ կարող է օգնութիւն հասցնել, բայց չէ հասցնում: նա  
մեղաւոր է, նա վատ զինուոր է պատերազմի դաշտում:  
Առաքեալն էլ է ասում: «Ո՞վ որ գիտէ բարին, բայց  
չէ անում: Նրա համար մեծ մեղք է»: Խոկ սրբակրօն

վարդապետներից մէկը աւելի հեռուն է գնում: «Մար-  
դիկ, ասում է, պէտք է տանջուեն դժոխքումը ոչ  
թէ միայն այն չար գործերի համար, որ արել են,  
այլ և՝ այն բարի գործերի համար, որ կարող էին  
անել բայց չեն արել»:

Յիսուս Քրիստոս երբ տուեց մեզ այս մեծ խրատը  
թէ՝ «Այս ամէնը, ինչ որ ուզում էք որ ուրիշները  
ձեզ անեն, գուք էլ այն արէք նրանց», սրանով չվեր-  
ջացրեց իր խօսքը, այլ դրա մեծ նշանակութիւնը ցոյց  
տալու համար աւելցցրեց. «Որովհետև հէնց ո՞ր մէջ էն  
ուարունակութեան բարձր օրէնուներն ու ճայիկներն  
ի՞նչ է ուզում ասել սրանով Յիսուս. բոլոր օրէնքներն  
ու մարդարէութիւնները ինչպէս են մոել այդ երկու  
խօսքի մէջ: Ի՞նչքան աւելի պէտք է լինի մեր զար-  
մանքը, երբ մտածենք որ՝ օրէնքներն ու մարդարէու-  
թիւնները այն բոլոր խօսքերը, մտքերն ու խրատներն  
են, որ Աստուած ասել ու տուել էր Խրոսյէլի ժողո-  
վրդին իր ուզարկած մարդարէնների բերանով: Կարճ  
ասենք. օրէնքներն ու մարդարէութիւնները ամբողջ  
Աստուածաշունչ Ա. Գիրքն է: Խոկ ամբողջ Ա. Գրքի  
միտքը ամփոփուած է Աստուծոյ մեզ տուած տասը  
պատուիրանքների մէջ: Թէ այդ պատուիրանքները  
կատարենք, թէ Յիսուսի այս խրատը,—մի և նոյնն է:

Եւ մեր արած բարերարութիւնների փոխարէնը,  
երկնքի արքայութեան մէջ ստանալուց առաջ՝ պէտք  
է համոզուած լինենք, որ կը ստանանք այս և միւս  
կեանքի շեմքումը եղած ժամանակներս: Ճշմարիտ, մէկ

լաւ մտածենք թէ՝ ինչեր են գալու մեր աչքի առաջը,  
երբ տեսնենք կամ յիշենք այն քաղցածին, որին մենք  
կերակրել ենք, այն ծարաւածին, որին մենք խմացրել  
ենք, այն մերկին, որին հագցրել ենք, այն պանդուխ-  
տին, որին մեր տուն ենք տարել, այն հիւանդին ու  
բանտարկուածին, որոնց տեսութիւն ենք գնացել:  
ի՞նչ ուրախ սրտով, ի՞նչ հանգիստ խղճով պէտք է  
յիշենք մենք նրանց: Ի՞նչ տեսարաններ են:

Եւ մեր մահուան բոպէներին, երբ աչքներս վեր-  
ջին տնգամ՝ կը գցենք այս աշխարհի վրայ և առաջին  
անգամ՝ դէպի երկինք, ո՞հ, այդ տիսուր, այդ ծանր  
ու անմիտար բոպէներին ոչ ոք և ոչի՞նչ բան չեն  
կարող մեզ այնպէս միսիթարել, ինչպէս այդ տեսա-  
րանները: Եւ գագաղում պառկելիս մեր հոգու տչքով  
կը տեսնենք այն թշուառներին, որոնց մենք որեւիցէ-  
կերպով օգնել ենք, և զբանք ամենքը կերեան մեզ՝  
ինչպէս միսիթարիչ հրեշտակներ:

Կանցնի վերջապէս այս աշխարհը իր փառքերով,  
իր հոգսերով. կը գայ մեր արածների մասին հաշիւ  
տալու օրը, յայնժամ՝ սիրով պէտք է այս խրատին  
հետեղները ընդունուեն արդար, անմահ գատուոր  
Յիսուսից այն ահագին օրը, որ էլ վերջ չէ ունենալու,  
այն մեծ օրը, երբ խօսիլ պէտք է վերջանայ և գործուը  
թագաւորի:



## Բ Ա Ն Բ.

1. Մի զանձէք ծեզ զանձս յերկրի, ուր ցեց եւ ուտի՛  
ապականեն, եւ ուր գողք ական հատանեն եւ գողանան:  
2. Այլ զանձեցէք ծեզ զանձս յերկինս, ուր ոչ ցեց  
եւ ոչ ուտի՛ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն  
եւ գողանան:

3. Զի ուր զանձը ծեզ են, անդ եւ սիրտք ծեր եղիցին:

Մատթ. Զ. 19—22:



Համարհիս երեսին ի՞նչ կայ մարդուս հա-  
մար ոսկուց ու արծաթից լաւ բան. ա՞խ, ի՞նչ լաւ  
բան է գանձ ունենալը: Ի՞նչ արժէ մի հարուստ, մի  
փարթամ՝ տիկնոջ համար—մատները շարել գոհար  
մատանիներ, բազուկը զարդարել ոսկի ապարանջանով,  
վիզն ու կուրծքը՝ աչք ծակծկող ակնեղէնով: Ի՞նչ  
փառք, ի՞նչ պարծանք է—մոնել այդ զարդերով մի  
լուսաւորուած, մի ջահաւորուած գահլիճ, մոնել մի

ընտիր հասարակութեան մէջ, և սրան—նրան բարեելիս, ձեռք տալիս՝ այլող կրակներ ցանել ու տարածել չորս կողմը: Երբ ամէն աչք քեզ կը նայի, երբ ամէնքի ուշքը քեզ վրայ կը լինի դարձրած, — մի թագաւորութիւն արժէ այդ րոպէն:

Բայց մեզ՝ տղամարդկանցս համար այդ կանացի զարդերը այնքան էլ գին չունեն. մեզ համար ամօթ էլ է զանազան զարդ ու զարդարանքով պարծենալը: Մեր պարծանքը փողն է, գրամն է: Լաւ քննեցէք «դրամ», բառը, թարս կարդացէք, կը ստանաք «մարդ»: Ասում են՝ այս նշանակում է թէ՝ մարդն ու դրամը անբաժան պէտք է լինեն: Այս, գրամը, փողը՝ մեր ամենահարկաւոր բանն է, մեր ուժն ու զօրութիւնն է, մեր պատիւն ու պարծանքն է, մեր երջանկութիւնն է. այս, ինչ եմ ասում: — մեր երկրորդ Աստուածն է. առաջին Աստուածը երկնքում—Աստուած, երկրորդ Աստուածը երկրում—փողը:

Բայց, քանի որ մենք այսպէս ոսկով ու փողով կուրացել ենք, լսենք՝ ինչ է ասում ամէն հարստութիւն տուող Յիսուսը: «Ձեզ հաճար, ասում է, Քանի թէ հաստիք ելիսուծը»: Ինչո՞ւ չէ որ գանձնվ ենք ապրում այս աշխարհում: Գանձ որ չհաւաքենք, մեզ ո՞վ կը պահի, մեր որդկերանցը ո՞վ կը կերակրի, կը հագցնի. ինչով կը հոգանք մեր հարարաւոր կարիքն ու հրամանը պէտք է կատարի, երկու տիրոջ կամքն ու հրամանը չի կարող կատարել: Եւ եթէ երկու նման տէրերի չի կարելի ծառայել, ինչպէս կարելի է ծառայել երկու հակառակ տէրերի, որոնցից մէկը Աստուած է, միւսը՝ փող: Փողասէրը, արծաթասէրը կռապաշտ է, նրա կուռքը փողն է: Երբ որ նա կատարեալ սիրով, սրտով ու հոգով է սիրում փողը, գրանից երեւում է, որ նա փողին է անձնատուր եղել.

մեկնել, անծանօթներից փառաւորուել, ծանօթներից երկրպագուել, և ուրիշ հազար ու մի տեսակ փառք ու պատուի տիրանալ: Գանձ որ չհաւաքենք, այս բաները ինչո՞վ պէտք է ձեռք բերենք:

Ո՞չ, սիրելիս, երբ Յիսուս ասում է՝ Ձեզ համար գանձ մի հաւաքէք երկրումը, չը պէտք է կարծենք թէ Նա հակառակ է գանձ ունենալուն. Նա հակառակ է գանձ հաւաքելուն, գանձ դիզելուն: Նա արգելում է ոչ թէ գանձ, փող ունենալը, այլ՝ աննպատակ փող հաւաքելը: Ինչո՞ւ. որովհետեւ, ինչպէս որ աւելորդ կերակուրները ծանրացնում են մարդուս ստամքու և վնասում առողջութեանը, այնպէս էլ՝ աւելորդ փող դիզելը խանգարում է հոգու կեանքը, և բոլորովին փչացնում է մեր քրիստոնէական վարք ու բարքը: Ինչ որ Յիսուս խրատում, հրամայում ու պահանջում է մեզնից, փողի նէրը նրա հակառակն է ստիպում անել: Այս պատճառով էլ Յիսուս աւելացնում է. «Չէք կարող ծառայել համ Աստծուն, համ փողին»: «Չէք կարող ծառայել երկու տէրերի»: Ամէն ծառայ մէկ տիրոջ կամքն ու հրամանը պէտք է կատարի, երկու տիրոջ կամքն ու հրամանը չի կարող կատարել: Եւ եթէ երկու նման տէրերի չի կարելի ծառայել, ինչպէս կարելի է ծառայել երկու հակառակ տէրերի, որոնցից մէկը Աստուած է, միւսը՝ փող: Փողասէրը, արծաթասէրը կռապաշտ է, նրա կուռքը փողն է: Երբ որ նա կատարեալ սիրով, սրտով ու հոգով է սիրում փողը, գրանից երեւում է, որ նա փողին է անձնատուր եղել.

այսպիսով նա իր հաւատը, յոյսն ու սէրը տալիս է փողին, բոլորովին մոռացութեան տալով Աստծուն։ Բայց ով որ մի անգամ եղել է ծառայ Քրիստոսի, նա երբէք չը պէ՛ռք է դառնայ ծառայ փողի ու մամնայի։

Միջակ կարողութեան տէր լինելը շատ անգամ լաւ է, քան անչափ հարուստ լինելը։ Ինչպէս իմաստունի մէկը աղօթում էր. «Ա. Ատուած, ասում էր. Հարստութիւն կամ աղքատութիւն մի տայ ինձ»։ Ինչո՞ւ. — որովհետեւ հարստութիւնը պահելու և վայելելու համար, իսկ աղքատութեան թշուառութիւնից ազատուելու համար՝ մարդուս հարկաւորուումէ անվերջ հոգսերի մէջ ընկնել։ Բայց աղքատութիւնը այնքան չէ կարող ու չէ վնասում հոգուն, ինչքան հարստութիւնը։ «Մեծ հրաշք կը համարեմ ես, ասում է Ա. Յօհան Ոսկեբերանը, որ մէկը շատ հարստութեան աւել դառնայ ու շատ պակասութիւնների ժերի չդառնայ»։ Ինչո՞ւ. — «Որովհետեւ, ասում է առուքեալը, ամէն չարութեան, ամէն անկարգութեան ու մեղքի արմատը փողասիրութիւնն է»։ Փողասիրութիւնից առաջ է գալիս ագահութիւն, ատելութիւն, մարդասպանութիւն և, մի անգամ էլ «արծաթսիրութեամբ մոլեալ» Յուգայի ձեռքով — աստուածասպանութիւն։ Ագահութիւնը մի հոգեկան հիւանդութիւն է, և աշխարհում եղած հիւանդութիւններից ամենասարսափելին։ Իմաստունը՝ ագահի արարքներից զարմացած, ձայն է տալիս. «Մի վատ հիւանդութիւն տեսայ ես արեգակի տակը. գիտէք՝ որն է. հարստութիւնը՝ իր չար տիրոջ աչքից

հեռու պահուած, խորը թաղուած։ Միջև անգամ մահուան անկողինը չէ կարողանում մարդուս մոռացնել տալ ոսկու սէրը, փողի սէրը։ Հնդկաստանի առաջին մահմէտական իշխողը, զգալով որ իր մահը մօտեցէ է, հրամայեց գարսել իր առաջը իր բոլոր թանկագին քարերն ու ոսկին։ Վերջին անգամը աչք գցելով նրանց վրայ՝ նո, ինչպէս մի փոքրիկ երեխայ, գառն արտասուքով լցուած, ասեց. «Ոհ, քանի քանի վտանգների մէջ եմ գցել ինձ, ինչքան յոգնել տանջուել եմ հոգով ու մարմնով՝ այս բոլոր գանձերը ձեռք բերելու համար։ որչափ հոգսերի մէջ եմ լնկել սրանց պահելու և պահպանելու համար։ Իսկ հիմա, ես մեռնում եմ և յաւիտեան պէտք է բաժանուեմ սրանցից։ — Իսկ մի հարուստ գործարանատէր, որ իր համար ահագին կարողութիւն էր գիզեր, մեռնելուց առաջ հրամայեց որ գարսեն իր անկողնի վրայ մէկ մեծ կոյտ նոր կտրած ոսկի գրամ։ Նա գգուում էր շողշողուն ոսկիները և չէր կշտանում վրաները նայելուց։ բռնելով բարձրացնում էր ու վերևից զրնգով գացնելով ցած էր թափում։ Խեղճի ուշքը վերանում էր թափուող ոսկիների ձայնից։ Բայց, երբ նա մեռաւ, իր գռան շէմքուն ընկած վերջին մուրացկանից ոչ հարուստ էր, ոչ աղքատ։

Պէտք է աեսնել թէ՝ ինչ աչքով էին նայում հարստութեան վրայ հին փիփսոփիաները։ Նրանցից մէկը, երբ լսեց որ իր բոլոր հարստութիւնը կորաւ, ասեց. «Այսուհետեւ ես հեշտ կը լինեմ փիփսոփիայ»։

Մի ուրիշ փիլիսոփայ, իր բոլոր հարստութիւնը կորցնելուց յետոյ՝ ասեց. «Ես չեմ փրկուի, եթէ հարստութիւնս չը կորչէր»: Մէկն էլ մի ահագին գումար, ծովը գցելով՝ ասեց. «Աւելի լաւ է, որ ես ձեզ ընկղմեմ ջուրն ածեմ: քան թէ՝ դուք—ինձ»: Եկեղեցական ս. հայրերից մէկը՝ աղնիւ ու թանկագին աղբ է անուանում հարստութիւնը:

Յիսուս, ասելով՝ Ձեզ համար գանձ մի հաւաքէք երկրումը, պատճառն էլ հետն է բերում: Որովհետև, ասում է, երկրումը կամ «Յէց» ու ժանժը կուտի, կամ գողէլը կը գողանան»: Երկիրը, տունը, խանութը անապահով տեղ է. մարդս միշտ երկիւրի, միշտ կասկածի մէջ է իր գանձի լաւ պահուելու մասին. ինչքան էլ թղթերի, լաթերի, կաշուի մէջ փաթաթենք, ինչքան էլ տուփերի, արկների, երկաթէ սնտուկների մէջ փակենք,— էլի հանգիստ չենք, էլի անապահով ենք: Մինչ անգամ գետինն էլ որ փորենք ու մեր գանձը այնտեղ պահենք, գողերի ձեռքը այնտեղ էլ կը հասնի, — տակից կը փորեն ու էլի կը հանեն: Է՛, էլ ինչ տեղ է մնում մեզ, գետերում ու ծովերում հօ՛ չենք կարող պահել. մեզ մնում է իմանալ՝ թէ ինքը Յիսուս որտեղ կը կամենար որ հաւաքէինը մեր գանձերը:

«Այլ Յէլ գունչէլը հասաւէցի+ երինու-ճը՝ ասում է. և պատճառն էլ հետն է բերում: Որովհետև «այնպէզ ո՛ւ յէց» ու ժանժը կուտի, ո՛ւ էլ գողէլը կը գողանան կամ գուտինը գորշէլը կը հանեն»: Այս վերջին խօսքերով երկինքը ու երկիր ստեղծող Աստուած մեզ հասկացնում

է որ մեր գանձը երկրի որ անկիւնումն էլ որ պահելու լինենք, միշտ երկիւղ ունենք թէ՝ փշանալու և թէ գողացուելու կողմից: Երկնքի պէս ապահով տեղ չկայ. այնտեղ, ուր Աստուծոյ աթուն է, ուր բիւրք բիւրոց հրեշտակներն են, ինչ գործ ունեն ցեցն ու ժանգը, գողն ու աւազակը: Յատ ապահով տեղ է երկինքը, մանաւանդ այն պատճառով որ ինքը Յիսուսն է ցոյց տակիս մեզ այդ տեղը: Բայց բանը սրանումն է թէ մենք մեր գանձերն ու հարստութիւնը ինչպէս պէտք է ուղարկենք այնտեղ: Երկինքը՝ բարձր, երկիրը՝ խոր. մենք մեր մարմնաւոր ծանրութիւնով չենք կարող բարձրանալ. թէթևամթուիչ հրեշտակներն էլ չեն իջնի մեզ համար: Յակոք նահապետի տեսած սանդուղքն էլ որի մի ծայրը երկրումն էր, միւսը՝ երկնքումը— միայն ինքը տեսաւ, այն էլ՝ երազումը: Ի՞նչպէս ուղարկենք ուրեմն, տանողն ով է:

Ա՛խ, ուղարկել ուղենանք, թէ չէ՝ տանող շատ կը ճարենք: Տեղ հասցնելը գժուար, անկարելի որ լինէր՝ Յիսուս ինչպէս մեզ երկինքը ցոյց կը տար. գուտուող աստ, տանող շատ կայ: Ամէն Աստծու օր կարաւաններ են որ գնում՝ են երկրից դէպի երկինք և գուտ ասում ես՝ տանողն ով է: Օր չի անց կենայ, որ այդ կարաւանին չհանդիպենք. ոտքներս արնպէս չենք փոխի, որ կարաւանի տիրոջը չպատահենք: Բաւական է որ մեր գանձը իր տեղից շարժենք, իսկոյն հարիւրաւոր տանողներ լոյս կլնկնեն, իրար ձեռքից իւլելավ՝ կը տանեն: Ահա սիրելիս, աղքատաներն են, որ շարէ

շար կապուած են այդ կարաւանների մէջ։ Եւ քանի քանի տեսակ են այդ աղքատները՝ հացի կարօտ, շորի կարօտ, գիշերուայ լսոյսի կարօտ, ժամապատառագի կարօտ։ Ի՞նչ որ մենք տանք այդ թշուառներին՝ թէ փող, թէ հաց, թէ շոր, թէ մինչ անգամ մի բաժակ ջուր, — դրանք բոլորը կը տանեն երկինք։ Ի՞նչ որ մենք այստեղ գնում ենք աղքատների, չքաւորների ձեռքը, այն բոլորը հաւաքուում է այնտեղ, երկնքումը։

Տե՛ս՝ այս ողորմելի ընտանիքը։ պահպանող հայրը անգործ, մանր երեխանները ամեռող օրը քաղցած— անօթի, մօր սիրու մորմոքեցնելով՝ հաց են պահանջում նրանից. լաւ մտածիր, մեզը ու կարագ չեն պահանջում։ Հաց են պահանջում։ սպիտակ ու փափուկ հաց չեն ուղում։ ուեն ու չորն էլ ուրախութեամբ կուտեն, — բոյց տուող չկայ։ «Զհաց մեր հանապալորդ տուր մեզ այսօր» ասում ենք «Հայր մերի», մէջ. մեր ամէն օրուայ հացը այսօր էլ տուր մեզ։ Մեր երկնաւոր Հայրը ինչպէս պէտք է տայ մեզ այդ հացը. — նա ունեցողի ձեռքով կը տայ չունեցողին, հացի կարօտներին։ Աստուած քեզ դրել է երկրի վրայ, գիտե՞ս՝ ինչի. — Իր սուրբ անունը փառաւորելու համար։ «Սուրբ եղիցի անուն քո»։ Ինչո՞վ պէտք է սուրբ անես քո Աստուած անունը. — քո տեսակ-տեսակ բարի գործերով։ Ամէն չարիքի գիմաց՝ Աստուած մի բարիք է դրել, ամէն ցաւի համար մի դեղ։ Այդ բարիքն ու դեղը քո ձեռքումն է, քո գանձիդ ու գանձարանիդ մէջ։ ո՞ր օրուայ համար ես պահում։ կարաւանը

գնում է, տուր իրան։ Բայց մենք ի՞նչ ենք տեսնում։ Փողատէրը, հարուստը, Աստուածոյ քարութիւնով տուն ու գուռը լիքը մարդը, փոխանակ միտքը բերելու այն կարաւանը, որի մի ծայրը իր մօտ է, իր կողքին, իսկ միւսը արգէն ահագին ճանապարհ կտրելով՝ Աստուածոյ աթոռին է հասել. — նա, այդ անմիտ հարուստը ուրիշ բան է մտածում։ երկրիս մէջ իր անչափ գանձերն ու հարստութիւնը տեղաւորելու, աւելի խորը պահելու համար հնարք ու տեղ է վնտուում։ Այդպիսի մի անմիտ հարստի պատկեր ցոյց է տալիս մեզ Յիսուս իր սուրբ Աւետարանի մէջ։

Ոչի՞ նրա խօսքերը։

«Կար մի հարուստ մարդ, որ ունէր շատ անդ ու անդաստան, մեծ մեծ այգիներ, անթիւ ոչխարներ, կովեր, գոմէշներ։ Նրա ամբարներն ու մասանները հացով գինով ու մրգեղէնով լիքն էր. կաթն ու մածունը, սերն ու կարագը, եղն ու մեղրը նրա տանը առուի պէս էր գնում։ Որը քսան, երեսուն մշակ՝ հովիւ, հօտաղ, հնձաւոր, այգեպան. — նրա տանը սեղան էին նստում։ նրա հացով լիանում և նրան արեշտութիւն խնդրում։ Աստուած, որ նրա հաւատը փորձելու համար՝ նրան այդպիսի չտեսնուած առատութիւն էր տուել, նրա տուն ու տեղը այնպէս էր լցրել ամէն տեսակ բարութիւնով։ որ մարդը մնացել էր շուարած։ Նա մտածում էր. «Այսքան հարստութիւնս ես ի՞նչ պէտք է անեմ, որտեղ տեղաւորեմ, գետի պէս գալիս է ու գալիս։ Հա, գիտեմ՝ ի՞նչ կանեմ. կը քանդեմ

ամբարներս, մառաններս, մարագներս, գոմերս, փարախներս և կը շինեմ աւելի մեծերն ու ընդարձակները: Երբ ամէն բան կը շինեմ կը պատրայտեմ և ունեցածս կը տեղաւորեմ այն ժամանակ կասեմ ինձ ու ինձ: —Այլ մարդ, ահա այնքան բարիք, այնքան կարողութիւն ունես, որ չէ թէ մի պյն քեզ՝ քո ահագին ընտանիքին է բաւական, այլ և թէ որդիքդ, թոռներդ ու թէ թոռնորդիքդ այլ ուտեն, խմեն, հագնեն —մաշեն, կոտրեն —ջարդեն, էլի մի հարիւր տարի բաւական կը լինի: Է՞, երբ որ այսպէս է, գուէլ կեր, խմիր և ուրախ կաց:

Գանի որ նա այդպիսի չոփ ու ձեի մէջ էր, հարիւրաւոր տարուայ պլաններ էր սարքում, յանկարծ Աստուած ձայն է տալիս նրան: «Անմիտ, գու սկորմելի, այս գիշեր հոգիդ քեզնից յետ են պահանջելու, —այդ որ սարքում կարգում ես, հաւաքում լցնում ես՝ ումը պէտք է մնայ: Հոգիդ տուած ժամանակդ գրանցից ոչինչ չես կարող վայելել. բայց մէկ տեսնենք՝ իմ պատրաստած արքայութիւնից մի բան կարող ես վայելել. մարմնով կը մեռնես այս գիշեր, արդեօք հոգով էլ չես մեռնի յաւիտեան: Այդքան բարիքներ, այդքան առատութիւն տուի ես քեզ, միթէ գու այստեղ ոչինչ չունէիր ուզարկելու. ինչի՞ համար եմ թողել այդ անտուտ ու անծայր կարաւանները քեզ մօտ, քո կողքիդ, քո շուրջդ»: Այս, ինչ բարկութիւն, ինչ կրակ է թափում Աստուած անմիտ հարուստների վրայ, որոնք երկնքի արքայութիւնը թողած՝ երկրի արքայութեան ետք իմաստներից են վսգում: Զարմանալի անհոգ

ենք մենք. լաւ գիտենք որ այս երկիրը, որի վրայ մենք կարճ ժամանակով ապրելու ենք, անցաւոր է. բայց էլի այստեղ մի տուն, մի շինութիւն ունենալու համար՝ մեր բոլոր ունեցածներս ծախսում ենք, շատ անգամ արեան գնով ենք ձեռք բերում ուզածներս, իսկ երկինքը ձեռք բերելու համար, որ յաւիտեան պէտք է ժառանգենք ու վայելենք, ոչինչ ծախսեր չենք ուզում անել, մանաւանդ որ երկինքը այնքան ծախսեր չէ պահանջում:

Հենց այսպիսի հարուստների համար է, որ Յիսուս ձայն է տալիս. «Ճշմարիան եմ ասում ձեզ, աւելի հեշտ կարող է պատահել, որ ուզոր ասդան ծակը մտնի, քան թէ հարուստը երկնքի արքայութիւնը»: Բայց, Յիսուսի ասածը բոլոր հարուստների մասին չէ: Նու երկնքի արքայութիւնը մտնելը այդքան դժուար ու անկարելի է համարում միայն անմիտ հարուստների համար, որոնք ագահաբար դիզում են և անմտաբար փականքների տակ գնում, կամ ունայն վայելչութիւնների վրայ գործ ածում: Նայեցէք ահագին հարստութեան տէր Հայր Աբրահամին՝ երկնքի արքայութեան մէջ բազմած, այն էլ մէկ այնպիսի պատուաւոր տեղ, որ արքայութիւնը ուրիշ խօսքով «գոգն Աբրահամու» է ասուում: Դա յատուկ Յիսուսի ցոյց տուած արդար հարուստն է, որ փոխանակ երկրի վրայ իր համար փառաւոր ու շքեղ տներ շինելու՝ երկնքումը ոսկէ պալատներ է պատրաստել: Լսիր հիմա, թէ երկնքում ինչպէս են փառաւոր պալատներ պատրաստում:

Հնդկաստանում մի թագաւոր կար՝ Գունդաֆոր անունով. սա ցանկացաւ մի քանի պալատ ունենալ իր երկրում հռոմայեցոց կայսրների պալատի նման։ Այս պատճառով նա Աւան անունով մի հարուստ վաճառական ուղարկեց Հրէաստան, որ այնտեղ պալատ շինելու համար մի վարպետ գտնի։ Վաճառականի գնացած ժամանակը՝ Քրիստոս Երևեցաւ Թոոմաս առաքեալին երազում և ասեց. «Այդ եկած մարդու հետ գնա՛ իր երկիրը և քարոզի՞ր այնտեղ Աւետարանը»։ Միւս օրը առաքեալը, տեսնելով Աւանին՝ յայտնեց որ նրա ուզած վարպետը ինքն է և հետը գնաց Հնդկաստան։ Գունդաֆոր թագաւորը ուրախացաւ, ցոյց տուեց վարպետին պալատների տեղը, շինութեան համար շատ ոսկի ու արծաթ տուեց, իսկ ինքը գնաց մի ուրիշ երկիր։ Առաքեալը ստացած բոլոր փողերը բաժանեց աղքատներին և սկսեց քարոզել Աւետարանը։

Անց կացաւ երկու տարի։ Գունդաֆորը եկաւ իր երկիրը և մարդ ուղարկելով վարպետի մօտ՝ հարցրեց, «Բանն ի՞նչ տեղն է մնացել. շուտ կը վերջացնես պալատների շինութիւնը»։ Առաքեալը պատասխանեց. «Ամէն բան պատրաստ է. միայն առաստաղը ծածկելն է մնում»։ Թագաւորը ուրախացաւ, և էլի ոսկի ուզարկեց, որ մնացածն էլ լրացնի։ Ս. Թոոմասը այդ փողերն էլ բաժանեց չքաւոր ժողովրդին, որոնք ուրախութիւնից խօսք չէին գտնում նրան շնորհակալութիւն անելու։

Շուտով թագաւորը լուր ստացաւ, որ ինքը

խաբուած է։ Կանչեց իր մօտ Առաքեալին՝ նրան սարսափելի մահով ոչնչացնելու։ Երբ առաքեալը բերին, թագաւորը հարցրեց նրան։

— Շինել ես պալատներս։

— Շինել եմ պատասխանեց նա, և ի՞նչ փառաւոր պալատներ են։

— Ո՞րտեղ ես շինել, ցոյց տուր տեսնեմ։ ասաց թագաւորը։

— Այն պալատները դու այս կեանքում չես կարող տեսնել, ասեց առաքեալը, դու կը տեսնես միւս աշխարհը գնացած ժամանակդ, և ուրախ ուրախ կը տեղափոխուես ու կը բնակուես նրանց մէջ յաւիտեան։

Թագաւորը, այս անհասկանալի խօսքերը լսելով՝ կարծեց թէ նա համարձակում է ծաղրել իրան։ Բարկացաւ ու կատաղեց. բայց որովհետեւ չկարողացաւ խելքի գալ ու մտածել թէ ինչ անի այդ անամօթխաբերային, առ ժամանակ հրամայեց որ նրան ու Աւանին բանտ նստեցնեն, մինչև որ նրանց համար մի չտեսնուած տանջանք կը մտածի։ Երբ ուշքի եկաւ, թագաւորը վճռեց երկուսի կաշին էլ քերթել ու իրենց այրել։ Ո՛չ ոք չէր համարձակում մի խօսք դուրս թողնել թագաւորի առաջը. սարսափելի տանջանքից ազատուելու էլ ո՛չ մի հնար չկար։ Բայց «Ի՞նչ որ մարդուս համար անկարելի է, այն Աստուծոյ համար շատ հեշտ է»։ որտեղ մարդս յուսահատուում է, իր անզօրութիւնը տեսնելով, այնտեղ Աստուծ հացցնում է իր օգնութիւնը իր կամքը կատարողներին։

— «Այս ի՞նչ բերիր մեր գլխին, մենք կորած ենք»  
ասում էր Աւանը բանտումը: — «Մի վախենար, ասում  
էր նրան առաքեալը, ես յոյս ունեմ: որ մեզ ոչինչ  
վնաս չի պատահի»:

Նոյն գիշերը թագաւորի եղբայրը երազում տեսու  
իր եղօր պալատները. առաւօտը վաղ-վաղ գնաց թա-  
գաւորին առեց.

— Ես գիտեմ՝ գու ինձ այնքան սիրում եմ, որ ինչ  
էլ խնդրեմ քեզնից, չես խնայի ինձ. տուր ինձ այն  
պալատները, որ շինել ես տուել երկնքումը. իսկ գրա  
փոխարէն՝ ստացիր ինձնից իմ բոլոր հարստութիւնս:

— Ի՞նչ պալատների մասին ես խօսում: հարցրեց  
թագաւորը:

Եղբայրը պատմեց իր երազը, և թագաւորը ասեց:

— Ես քեզ այն պալատները չեմ կարող տալ. բայց,  
եթէ դու էլ ես ցանկանում այնպիսի պալատներ ու-  
նենալ, մենք մի լաւ վարպետ ունենք, նա քեզ համար  
էլ կը շինի:

Այս ասելուց յետոյ, թագաւորը իսկոյն ազատեց  
բանտարկուածներին. ինքը իր ոտքով գնաց նրանց  
առաջը, մինչև գետին գլուխ տուեց Ա. թոմասին և  
խնդրեց նրան որ ների իր անգիտառւթեան յանցանքը:  
իսկ Ա. առաքեալը, շնորհակալութիւն անելով Աստծուն  
իր գործի յաջողութեան համար՝ թագաւորին ու նրա  
եղօրը քարոզեց Ա. Աւետարանը, մկրտեց նրանց և  
այսպիսով քրիստոնէութիւնը մտցրեց ամբողջ չնդկաս-  
տանում:

Յիսուս ասելով՝ Զեր գանձը երկնքումը հաւաքե-  
ցէք, իր խրատը վերջացնում է այսպէս. «Որ վետու,  
ո՞վել յեր գանձն է, ո՞յնպէս էլ յեր ովքը իւ վնէչ: Սա  
բոլորուին պարզ է. որտեղ մեր գանձն է, մեր ուշք  
ու միտքն էլ է այնտեղ, մեր սիրան ու հոգին էլ:  
Բայց որովհետեւ Յիսուս կամենում է, որ մեր ուշք ու  
միտքն էլ, մեր սիրտն ու հոգին էլ ոչ թէ երկրումն  
ինի, այլ երկնքումը, այս պատճառով պահանջում է  
որ մեր սրտից առաջ մեր գանձերը այնտեղ ուղարկենք:  
Երբ մեր գանձարանը կը շինենք երկինքը, այն ժամա-  
նակ մեր աշքն էլ երկրի վրայ չենք գցի. և այն ամէն  
բաները, որոնց համար մենք գողում, հոգի ենք տա-  
լիս, կը կորցնեն մեր աչքում իրանց արժէքը:

Աշխարհումն շատ տեսակ բարեգործութիւն կայ,  
բայց ամենից լաւը, Աստծու սիրած ողորմութիւնն է,  
որին բարեգործութեանց թագուհի են անուանում:  
Ողորմութեան թուիչքը շատ արագ է ու համարձակ:  
Նա երկրից գէպի երկինք գնալիս ձեղքում է օդի  
ահագին տարածութիւնը, իր ետևն է թողնում լու-  
սինը, թաջում է արեից բարձր և հասնում է երկինք:  
Բայց նա երկնքումն էլ չէ կանգ առնում: անց է կե-  
նում երկինքը, ոտքի տակն է թողնում հրեշտակների  
գասը և բոլոր երկնային զինուորութիւնը և հասնելով  
երկնից-երկինքը՝ կանգնում է ուղղակի թագաւորական  
գահի առաջը: Նա պահանջում է երկնաւոր Հօրից  
Նրա պարոքը, այն է՝ մէկի փոխանակ—հարիւրապա-  
տիկը, փոքրի փոխանակ—մեծը, երկրաւորի փոխանակ

— երկնաւորը, մարմնաւորի փոխանակ — հոգեորը, ժամանակաւորի փոխանակ — յաւիտենականը: — Ի՞նչ երեւլի առուտուր:

Բայց հարկաւոր է որ այս առուտուրը, որ մարդն անում է Աստուծոյ հետ, անի իր ձեռքով, իր յօժար կամքով, իր կենդանութեան օրով և ոչ թէ՝ ուրիշի ձեռքով, ուրիշի խելքով, մահուան անկողնումը պառկած: Իր ձեռքով և ուրիշի ձեռքով արած բարերարութեան մէջ սար ու ձոր կայ: Ահա՝ ինչպէս: — Ասենք թէ երկու պանդուխտ գիշերով ճանապարհ են գնում: մէկը ճրագը իր առաջից է տանում: միւսը՝ ետևից: Այդ ճրագներից ստուերներ են տարածուում գետնի վերայ: Առաջից ճրագ տանողի ստուերը ետևիցն է գնում: իսկ ետևից տանողի ստուերը առաջիցն է գնում և չէ թողնում որ ճանապարհորդը իր առջեր եղած դարն ու փոսը, քարն ու քոլը լաւ տեսնի:

Մարդս էլ այս աշխարհում մի պանդուխտ է, որովհետեւ մեր հայրենիքը երկնքն է: Մեռնելիս ամէն մէկս ճանապարհ ենք ընկնում դէպի յաւիտենական կեանիքը: Եթէ մեր մեղքերի ահագին ստուերը մեր առաջից գնայ երկնային դատաւորի մօտ, ի՞նչ օգուտ պէտք է տայ ետևներիցս եկող անժամանակ ու տկամոյ տուած ողորմութեան նուազ լոյսը: Մեր ողորմութեան, մեր բարեգործութեան լոյսը մեր առաջից պէտք է ուղարկենք, մեր առողջութեան, խելքը գոլիներիս եղած ժամանակը, մեր ձեռքով և չպէտք է սպասենք այն ճրագներին, որ մեր ժառանգները մեր

մահից յետոյ կը կամենան ուղարկել մեր ետևից: Այն էլ, Աստուած գիտէ, կը վառեն նրանք մեզ համար այդ ճրագները:

Այսպէս սիրելիս, միւս կեանքում մեզ չեն հարցնի թէ՝ ձեր աշխարհում ի՞նչ կերաք, ի՞նչ խմեցիք, ի՞նչ հագաք, ումը զարմացրիք, ումից փառաւորուեցիք: Այնտեղ մեզ կասեն՝ ի՞նչ որ ձեր հողեղէն, ժամանակաւոր աշխարհում կերաք, խմեցիք, — ձեզ հաղալտեսնենք՝ ձեր վերջին օրուայ համար մի բան ուղարկել էք պահելու այս մեր լուսեղէն, յաւիտենական աշխարհի գանձարանում:





Բ Ա Դ Գ .

Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ չայըն  
ծեր երկնաւոր կատարեալ է:

Մատթ. Ե. 48:

**Յ**իսուս, 30 տարեկան հասակում դուրս  
եկաւ Խրայէլի ժողովրդի մէջ Իր քարոզ-  
ներով: Նա՝ եղած օրէնքների հակառակ ոչինչ չէր քա-  
րոզում, այլ նրանց աւելի բացատրումէր ու լրացնում:  
Ինքն էլ է ասում: «Ես նրա համար չեմ եկել որ եղած  
օրէնքները քանդեմ: այլ եկել եմ նրանց լրացնելու»:  
Եւ Նա, ձեռք առնելով նրանց օրէնքները՝ մէկ-մէկ  
բացատրում ու լրացնում էր Իր քարոզների մէջ:

Բայց Յիսուսին պէտք է տեսնել օրէնքները բա-  
ցատրելիս, Նրան պէտք է լսել երկնային իմաստու-  
թիւնները երկրաւոր մտքերով հասկացնելիս: Պէտք է  
տեսնել ու լսել Նրան ոչ թէ այն պատճառով որ

մինչեւ Նրա աշխարհ գալը՝ մարդկանց մտքերը կապ-  
ուած կաշկանդուած էին օրէնքի տառի վրայ, այլ  
այն պատճառով, որ Իր խօսքերով Նա բաց է անում  
մեզ համար երկինք տանող ճանապարհը, որտեղից  
եկել է Ինքը: Եթէ երկար էլ լինի, եթէ ծուռն ու  
քարքարոտ էլ լինի այդ ճանապարհը, մենք պէտք է  
աչքներս խուփ հետևենք Նրան, որովհետեւ Ինքն է  
«ճանապարհը»: «Ո՛վ ուզում է գնալ Հօրս մօտ, ասում  
է Յիսուս, միայն ինձանով կարող է գնալ»:

Հիմա մտածիր, սիրելիս, թէ՝ երբ ճանապարհ  
ցոյց տուող Յիսուս բաց անի Իր աստուածային բերանը,  
մենք՝ որ Նրա ձեռքի գործն ենք, Նրա ոտքի հողն  
ենք, ի՞նչպէս պէտք է ականջ գնենք Նրան: Կարող  
ենք անուշադիր թողնել Նրա բերանից դուրս եկած  
որ և իցէ խօսքը: Պէտք է լաւ համոզուած լինենք, որ  
Նա մեզ չի մոլորեցնի, որ Նա և միայն Նա կարող է  
ամէն բան ցոյց տալ, յայտնել ու ասել մեզ ճշմար-  
տութեամբ, քանի որ Ինքն է ճշմարտութիւնը, «մարմ-  
նացած ճշմարտութիւնը»: Եւ եթէ գնանք Նրա ցոյց  
տուած ճանապարհովը, մենք յաւիտեան կապրենք,  
կը վայելնք յաւիտենական կեանքը. որովհետեւ Ինքն  
է մի և նոյն ժամանակ և ամենքիս կեանք տուողն  
ու հէնց «կեանքը»: Նա մեզ տուել է երկրաւոր, Ժա-  
մանակաւոր կեանքը, բայց զրանով չէ բաւականանում:  
Նա ուզում է մեզ տալ և երկնային, յաւիտենական  
կեանքը. որովհետեւ, թէպէտ մենք երկրումն ենք  
բնակուում: բայց իսկապէս երկնաքաղաքացի ենք,

Երկնքի համար ենք ստեղծուած, երկինքը պէտք է վայելենք:

Ճշմարիտ է, Յիսուս յը քանդեց եղած օրէնքները, բայց և յը թողեց այնպէս, ինչպէս որ կային, ինչպէս որ երեւում էին. այլ տակն ու վրայ արեց և ցոյց տուեց, որ մարդիկ միայն նրանց աստառն էին տեսնում: իսկական երեսը նրանց հոգու աչքից ծածկուած էր: Այդ էր պատճառը, որ Խրայէլացոց մեծ մասը, այն է՝ դպիրներն ու փարիսեցիները կամ ուրիշ խօսքով՝ ուսումնականներն ու կեղծաւորները, արտաքին արարողութիւններին աւելի մեծ նշանակութիւն էին տալիս, քան թէ օրէնքին ոգուն: (Մեր այսօրուայ ժողովրդի մեծ մասի հասկացողութիւնն էլ այդպէս է): Մի խօսքով՝ հրէից հասկացած օրէնքների ու Յիսուսի քարոզած օրէնքների մէջ մեծ զանազանութիւն կայ. այնքան մեծ զանազանութիւն՝ ինչքան որ կայ հոգու և մարմնի մէջ, առարկայի և իր ստուերի մէջ:

Յիսուս, եղած օրէնքները բացատրելիս, վեր է առնում իբրև օրինակ նրանցից մէկը և ասում: — Դուք ձեր ժողովրդանոցներում ձեր ուսուցիչներից կամ հէնց ինքներդ սուրբ գրքից լսած կը լինէք թէ այս ինչ բանը այսպէս պէտք է անել. բայց ես ձեզ ասում եմ որ՝ ոչ թէ այդպէս պէտք է անել, այլ այն, ինչ որ օրէնքի ոգին է պահանջում: Ահա մի քանի օրինակ: Դուք լսել էք, ի հարկէ, որ օրէնքը ձեզ ասում է՝ «Մի սպանիր»: Խոկ ես ձեզ ասում եմ՝ ոչ թէ միայն

չպէտք է մարդ սպանէք, այլ և չպէտք է այնպիսի մի բան անէք, որից մարդասպանութիւն առաջ գայ: Օրինակ: Մէկին՝ Յիսուս՝ ասելուց պէտք է զգուշանասորով հետեւ այդ խօսքից յետոյ բարկութիւնդ շարժում է, իսկ յետոյ՝ շատ հեռու չէ ծեծն ու սպանութիւնը:

Դուք լսել էք նոյնպէս որ օրէնքը հրամայում է թէ՝ Շնութիւն մի անիր, անկարգ, անառակ կեանք մի անց կացնի, ամուսնական սուրբ օրէնքը մի պղծիր, ընտանիքի պատիւը մի ոտնակոխ անի: Զկարծես թէ դու անպատճառ պէտք է մէկի հետ անառակ կեանք անցկացնես, որ Աստուծոյ հրամանին հակառակ գնացած լինես: Ոչ, եթէ մէկին ծուռն աչքով էլ մտիկ տաս, իմ հաշուով, դու էլի շնութիւն ես արել: Եւ ուղիղն ուզում ես՝ շատ լաւ կանես որ քեզ սիսալեցնող քո միտքը ծուղ աչքը քո ձեռքով հանես կուրանաս, քան թէ երկու աչք ունենաս ու չար ճանապարհին ման գաս: Այդ չար աչքիդ տուած վնասն էլ միայն այն հօ չի լինի որ քեզ բարի ճանապարհից հանում է, թանկագին ժամանակդ փշացնում է, ծանօթի ու բարեկամի մօտ անունդ կոտրում է, հարստութիւնդ ոչնչացնում է. այլ մեծ վնասն այն է լինելու որ յաւիտենական կեանքի փոխանակ՝ քեզ համար յաւիտենական տանջանք է պատրաստում: Եւ ծուռ աչք ասելով էլ ոչ թէ մարմնաւոր աչքը պէտք է հասկանաս, այլ՝ հոգու աչքը, ծուռ մոքի աչքը, գէշ ցանկութեան աչքը, մանաւանդ որ՝ մարմնաւոր աչքը հանելով՝ մոքի, սրտի ու ցանկութեան աչքը չենք հանում: Կարճ ասելով՝

աւելի լաւ կանես որ՝ զրկուես այն բանից, որին աչքիդ չափ սիրում ես, և արքայութեան արժանանաս, քան թէ սիրածդ վայելես և արքայութիւնից զրկուես:

Դուք այն էլ լսած կը լինէք որ ասուած է թէ՝ — Ոչ ոքի միք ների, ոչ ոքի միք համբերի, «Աչքի փոխանակ աչքը հանեցէք, ատամի փոխանակ ատամը փշրեցէք» ձեռքի տեղ՝ ձեռքը, ոտքի տեղ՝ ոտքը կոտրեցէք, վէրքի տեղ վէրք՝ հարուածի փոխանակ հարուած հասցրէք», մի խօսքով՝ ով ինչ կողմով վնաս է հասցնում, դուք էլ այն կողմով նրան իր արժանաւոր պատասխանը տուէք: \*) Բայց ես ձեզ ասում եմ: Տեսար՝ դիմացիդ մարդը չարի, անիրաւի մէկն է, մի հակառակիր նրան: Կարելի է դու ասես՝ շատ էլ չար է, անիրաւ է, եթէ ինձ անպատուում է, պէտք է լուն ուրեմն. տուած անպատուութեանը չպէտք է պատասխանեմ: — Այս, ասումէ Յիսուս, պէտք է լուս: Եթէ շապիկդ խիս՝ շորդ էլ հետը տուր. եթէ երեսիդ ապտակ խփի, միւսն էլ դէմ արա. եթէ հայհոյի, լուութեամբ ընդունիր: Մի խօսքով՝ մի հակառակիր չարին, անիրաւին:

Մենք շատ կը սխալուենք, եթէ Յիսուսի ասած այս խօսքերը հէնց այսպէս էլ հասկանալու լինենք. որովհետեւ այստեղ խօսքը ոչ թէ իրաւունքի վրայ է, այլ՝ քրիստոնէական համբերութեան: Երբ ասում է՝

\*) Մովսէս մարգարէի դատաստանական օրէնքը այդաէս էօ համալում, եւ յատուկ դատաւորների համար էր գրուած:

թող որ շորդ էլ հանեն, թող որ աւելի հայհոյեն: — Նա դրանով ոչ թէ ուզում է ասել թէ հէնց նահատակուիր ուրիշի ձեռքին, լոիր՝ ով ինչ ուզենայ քեզ ասել անել: Այլ ուզում է ասել թէ ինչ որ կարելի է համբերութեամբ անել այն չի կարելի թօփ ու թուանքով անել. խփողին խփելով՝ ծեծողին ծեծելով՝ գու կրակի վրայ կրակ ես աւելացնում: և շատ հեշտութեամբ մի փոքրիկ կայծից մի ահագին հրդեհ է առաջ գալիս: Բայց համբերելով՝ գու քեզ անպատուողի լեզուն կապում: ձեռքը թուացնում ես, նրա զէնքը ձեռքից վէր ես գցել տալիս: նա ամացում է, նա զղջում է, նա իրան յաղթուած է տեսնում: Զի՞ պատահել որ՝ երբ մէկին անզգուշութեամբ մի վատ, մի ծանր խօսք ես ասել և նա քեզ չի պատասխանել, դու ուրիշ անգամ ամօթից չես կարողացել երեսին նայել: Քաջը ոչ թէ նա է, ով որ չարին չարութեամբ է պատասխանում: Քաջը նա է, որ ոչ միայն չար չէ անում: այլ՝ չարին բարութեամբ է պատասխանում:

Բարիին բարի հատուցանելը՝ մարդկային է,  
Զարին չար հատուցանելը՝ անաօնային է.  
Բարիին չար հատուցանելը՝ գիւային է,  
Զարին բարի հատուցանելը՝ աստուածային է:

Պատմումեն թէ՝ մէկ օր Հայր Աբրահամը նստած էր իր վրանի գռանը, երբ մօտեցաւ նրան մօտ 120 տարեկան մի մարդ: Աբրահամը, որ առանց հիւրի հաց չէր ուտում: օտարականին տեսնելով՝ ուրախ ուրախ

Հրաւիրեց նրան իր վրանը։ Որը մթնել էր վրանումը Աբրահամի ծառաները իրիկնահաց պատրաստեցին։ Հացի նստելուց առաջ Աբրահամը սկսեց աղօթք անել։ Յետ նայեց, տեսաւ որ հիւրը աղօթք չէ անում։ Աբրահամը, այս բանի վրայ զարմանալով, հարցրեց նրան։

— Եղբայր, ինչո՞ւ չես աղօթում։

Հիւրը պատասխանեց.

— Ես միայն կրակին եմ երկրպագում և ուրիշ Աստուած չեմ ճանաչում։

Այս պատասխանի վրայ Աբրահամը բարկացաւ ու նրան դուրս արեց վրանից։ Այն ժամանակ Աստուած ձայն տուեց.

— Աբրահամ, ո՞ր է օտարականը։

— Տէ՛ր, ես նրան դուրս արի իմ վրանից, որովհետեւ քեզ չէր երկրպագում։

— Ո՞րչնուած, տաեց Աստուած, այդ մարդը իր ամբողջ կեանքում ինձ անարդում։ անպատուում էր բայց ես նրան հարիւր տարուց աւելի համբերեցի։ դու մի գիշեր չկարողացա՞՞ր համբերել։

Դուք այն էլ լսած կը լինէք, ասում է Յիսուս, թէ՝ «Ընկերոջդ սիրիր, թշնամուդ ատիր»։ Իսկ ես ասում եմ։ մեծ բան չէ, որ ընկերոջդ, եղբօրդ, բարեկամիդ սիրես։ այդպէս հօ մաքսաւորներն ու մեղաւորներն էլ են անում։ էլ քո արածդ ինչով պէտք է աւելի լինի նրանց արածից։ Վերջին տգէտը, յետին անառակն էլ իր ընկերոջը, իր բարեկամին սիրում է։ դա մեծ շնորհչ չէ։ իմ ուզածս այս է՝ որ դու

«Թշնամուդ սիրես»։ Ում որ Աստուած ստեղծելիս ճակատին դրել է իր կնիքը, ով որ կրում է իր վրայ «մարդ» անունը, — նա է, որ պէտք է սիրուի ու սիրի։ Նո պէտք է սիրի ամենքին, ամենքը նրան։ Ուրեմն, Յիսուսի պահանջած սէրը մարդկային սէրն է, ճարդառիւնն է։ Երբ մենք կունենանք մեր մէջ այդ սուրբ սիրոյ կրակը, երբ մենք սէր ցոյց կը տանք ամէն մարդու, մեր խելքը, շնորհչքը, ոյժը, կարողութիւնը, մի խօսքով մեր ամբողջ մարդկութիւնը նրա ձեռքի տակը գնելով, նրան նուրիելով, նրան զոհելով, — այն ժամանակ և միայն այն ժամանակ մենք կատարած կը լինենք այն վսեմ գործը, որ ասուում է ճարդառիւնն է։

Ինքը մարդասէր Յիսուս սիրում էր ոչ թէ այս կամ այն մարդուն, ոչ թէ ծանօթի կամ անծանօթի, ոչ թէ այս կամ այն երկրի մարդուն, այս կամ այն ազգի մարդուն, այլ՝ իսկապէս մարդուն, որ ամէն տեղ և ամէն ժամանակ հաւասար է նրա աչքումը, հաւասար է Աղամայ որդի լինելովը, հաւասար է մահկանացու լինելովը, հաւասար է այս կեանքի վշտերովը, հաւասար է միւս կեանքի յուսովը։ Եւ այնքան է սիրում մարդուն, որ իր կեանքը զոհ է բերում խաչի վրայ նրա վիրկութեան համար։ Ոհ, ինչ սէր կարող է համեմատուել այս սիրոյ հետ։ Եթէ մոտածենք թէ՝ ինչ էր նա երկնքի մէջ և ինչ եղաւ երկրի վրայ։ Եթէ կշռենք թէ ինչ բանի էր արժանի նա, և ինչ ստացաւ, — կը տեսնենք որ նա անձնուիրութեան ու մարդասիրութեան մէկ այնպիսի օրինակ էր, որին ոչ

մեր միտքը կարող է հասնել ոչ լեզուն պատմել, ոչ գրից նկարագրել կարող է:

Այսպէս էլ դու պէտք է սիրես ամենքին՝ թէ բարեկամի, թէ թշնամու, թէ ծանօթի, թէ օտարի, թէ հայի, թէ թուրքի: Նայեցէք ձեր երկնաւոր Հօրը. Իր արևը աշխարհ ուղարկելիս էլ չէ հարցնում թէ տեսնենք լաւն ովէ, վատն ով և իր անձրեն ուղարկելիս չէ հարցնում՝ տեսնենք արդարն ովէ, մեղաւորն ով: Նա արժանաւոր ու անարժան չէ հարցնում, այլ արեն էլ անձրեն էլ հաւասարապէս ուղարկում է ամենքի վրայ:

Այսպէս, երբ Աստուած հրամայում է՝ մարդ մի սպանիր, շնութիւն մի անիր և այլն—դու ոչ թէ անպատճառ հրամանի խօսքերը պէտք է կատարես, այլ աւելի նրա ներքին իմաստը, նրա միտքը, նրա նպատակը պէտք է հասկանաս: Ասենք թէ երկրագործը, կամենալով հանգստացնել իր եղներին, հրամայում է իր մշակին որ այս ինչ օրը վար չանի: Եթէ մշակը հոգատիրոջ հրամանի միայն խօսքերը հասկանայ՝ առանց իմաստը հասկանալու, եղները լծի ու ամբողջ օրը վազեցնի գաշտի մի ծայրից միւս ծայրը և յոգնեցնի անասուններին,—գրանից ինչ դուրս կը գոյ: Այն՝ որ, ճշմարիտ է, մշակը երկրագործի հրամանը կատարում է, գաշտը չվարելով. բայց չէ որ եղներին աննպատակ վազեցնելով՝ ոչ միայն չէ հանգստացնում նրանց, այլ շատ կարելի է, եթէ նոյն օրը նա գաշտը վարելու լինէր, այնքան չտանջուէին անասունները:

\* \*

Այս և սրանց նման շատ խրատներ տալուց յետոյ, Ցիսուս իր բոլոր պահանջները կամենալով աւելի լաւ հասկացնել, իր բոլոր ասածներն ու ասելիքները կարձ կտրելով՝ այսպէս է վերջացնում: «Մի՛ խօսդով այնուի՞ կադարձաւալ ովէս+ է լինէ+, ինչու յերկնաւոր Հայրը կադարձաւալ է»: Ցիսուս այս վերջին խօսքով ուղումէ մեզ աստուածանման մարդիկ դարձնել: Եւ շատ պարզ է: Եթէ Նա՝ Ամարդ մի սպանիր» ասելով՝ ուղումէ սընցացնել մեր մէջ մարդասպանութեան պատճառները, Եթէ «Շնութիւն մի անիր» ասելով՝ ուղումէ ամէն անկարգ ցանկութեան կրակը հանգնել մեր մէջ, Եթէ «Զարին մի հակառակուիր» ասելով՝ ուղումէ արմատից հանել մեր սրտի բարկութեան թոյնը, Եթէ վերջապէս «Սիրիր թշնամուդ» ասելով՝ ուղումէ մարդասիրութեան զգացմունք արմատացնել սրտներում—ուրեմն ամէն բանից երևում է, որ Նա մեզ ուղում է մեր ընկած վիճակից բարձրացնել: Աստուածանման վիճակի հասցնել:

Կարելի է, դու մտածես՝ ես ինչպէս կարող եմ նմանուել Աստծուն,—Աստուած աշխարհի ստեղծող, ես Կրա ձեռքի գործը. Աստուած աշխարհի պահող, ես առանց Նրա պահպանութեան՝ մի օր, մի ժամ չեմ կարձ ապրել, Աստուած ամենակարող, ես մի թոյլ արարած, Աստուած ամենասուրբ, ես մի ողորմելի մեղաւոր. Աստուած ինչ ասեմ, ոչ նրա սկիզբն է յայտնի, ոչ էլ վերջ կունենայ. ես մի օր ստեղծուել եմ: մի օր պէտք է մեռնեմ:

\*

ԶԵ՞, եղբայր, այդպէս որ մտածես, գու մի աւազի հատիկ էլ չես Աստուծոյ առաջը. բայց Աստծուն նմանուելը բոլորովին ուրիշ բան է: ԶԵ՞ որ առաջ էլ նման է իր Աստուծուն. ասենք՝ գու չէիր, քո պապն էր, առաջին մարդն էր—Ադամ: բայց թէ գու, թէ նա,—երկուսդ էլ հօ մարդ էք: Ի՞նչպէս էր Աստուծ ստեղծել Ագամին.—Իր պատկերով ու իր նմանութիւնով: Ահա Նրա խօսքը. «Եկէք մարդ ստեղծենք՝ մեր պատկերով ու մեր նմանութիւնով»: Բայց այստեղ պատկեր ու նմանութիւն խօսքերը Աստուծոյ կերպարանքի մասին չէ ասուած:

«Աստուծոյ պատկեր» ասելով՝ Նրա իշխանութիւնը պէտք է հասկանաս, ոյն իշխանութիւնը, որ Աստուծ իբրև ստեղծող՝ ունի ամբողջ աշխարհի ու բոլոր արարածների վրայ: Նա է երկնքի ու երկրի, ծովի ու ցամաքի տէրը, Նրա կամքն է, ամենքին կառավարողը Նա է, ինչպէս իր կամքով տուել է մեզ հոգի ու մարմին. կարմղ է իր իշխանութիւնով քանդել ու քայլայել մեր մարմինը, յետ պահանջել մեզ տուած հոգին: Նա է միայն մեր կեանքի տէրը. «Նրանով է, որ կանք ու շարժուում ենք», ասում է առաքեալը:

Երբ ասում ենք՝ Աստուծ մարդուս ստեղծեց իր պատկերին, գրանով հասկանում ենք այն, որ Նա իր ստեղծած բոլոր աշխարհը մարդուս ձեռքի տակը գրեց և նրան տէր ու իշխան կարգելով երկրին՝ օրհնեց ու ասեց. «Աճեցէք ու շատացէք, ողջ աշխարհը լցրէք ու նրան տիրեցէք»: Եւ այն օրից մարդը աճում ու

շատանում է, հետզետէ լցնում է երկրիս անմարդաբնակ տեղերը և տիրում է նրան, իշխում է նրա վրայ: Աստուծած մարդուն իր պատկերին ստեղծելով՝ գրանով մի իշխանական, մի թագաւորական թագ գրեց նրա գլխին. չէ՞ որ մարդն էլ նրա ստեղծագործութեան թագն ու պսակն էր: Եւ մարդը իր բանականութեան շնորհիւ տիրում ու իշխում է ամէն բանի, հնազանգեցնումէ իրան բոլոր շնչաւորներին, խոնարհեցնում է իր կամքին կատաղի գագաններին, յաղթումէ ամէն գժուարութիւնների: Կենդանիների թագաւոր առիւծն անգամ զգում է մարդու մէջ Աստուծոյ պատկերի ոյժն ու զօրութիւնը:

«Աստուծոյ նմանութիւնը» ո՞րն է: Աստուծ հոգի է, սուրբ է: Մարդս էլ պէտք է նմանուի Աստծուն իր հոգեստը կեանքով, իր սրբութիւնով: Ի հարկէ, մարդս ոչ մի ժամանակ չի կարող լինել Աստուծոյ չափ սուրբ, ինչպէս որ չի կարող նրա չափ բարի լինել. Յիսուսի ասածի պէս՝ «բարին միայն Աստուծ է»: Բայց ամէն մարդ պէտք է աշխատի Աստծու պէս սուրբ լինել, ինչքան որ մարդս իր մարդկային բնութիւնով կարող է հասնել սրբութեան: Մարդս Աստուծոյ նմանութիւնը վայելում էր, քանի որ ապրում էր փափկութեան գրախտի մէջ. բայց հէնց որ նա զրկուեց այդ փառքից, նրա հետ էլ կորցրեց Աստուծոյ նմանութիւնը: Նա, Աստուծոյ հրամանի դէմ մեղանչելով՝ մեղքի ծառայ գարձաւ: Եւ այնուհետեւ սկսեց գլորուել մէկ մեղքից դէպի միւսը, և ինչքան նա շատ մեղքերի հանդիպեց,

Հիմքան նա խորը խրուեց մեղքերի մէջ, այնքան նրանում՝ Աստուծոյ նմանութիւնը աւելի պակասեց, նսեմացաւ, կորաւ և վերջը բոլորուին անհետացաւ ու նմանուեցաւ անբան անասունի: Այն օրուանից նրան մնումէ միայն աշխատել ամէն կերպ, որ բարձրանաց իր ստոր վիճակից, վերականգնի իր մարդկային պատիւը, որպէս զի կարողանայ նորից ձեռք բերել այն փառքը, որով նա փառաւորուած էր Աստուծոյ նըմանութիւնը կորցնելուց առաջ:

Յիսուս մեղնից պահանջումէ որ լինենք կատարեալ: Բայց ի՞նչպէս պէտք է լինենք կատարեալ, խելքով իմաստութիւնով. այդ գեռ բաւական չէ: Ճշմարիտ իմաստունը ոչ թէ շատ ուսեալ ու գիտուն մարգն է, այլ նա է, որ երկիրը թողած՝ երկինք է գիմում: իր կամքը թողած՝ Աստուծոյ կամքն է կատարում: Ճշմարիտ իմաստունը ժամանակաւոր գանձ չէ հաւաքում և իր յոյն ու ապաւէնը հաւաքած գանձը չէ շինում, փառք ու պատուի ետևից չէ ընկնում: սրտի ուզածները չէ կատարում: ոչ թէ երկար, այլ բարի կեանք է ցանկանում: Հասարակ գիւղացին, որ կատարում է Աստուծոյ կամքը, աւելի լաւ է, քան թէ այն իմաստունը, որ իր Աստուծոյ թողած՝ երկնքի աստղերն է համարում: իմաստութիւնը շատ լաւ բան է, բայց մաքուր խիզճը և բարեգործ կեանքը նրանից աւելի լաւ է: Ընդհակառակն մարդիկ իմաստութիւնն աւելի են փնտուում: Քան թէ բարի կեանքը, այս պատճուով շատերը սխալմունքների մէջ են ընկնում և ունեցած

իմաստութիւնը իրանց օգուտ չէ տալիս: Դատաստանի օրը մեզ չեն հարցնի թէ՝ ինչ ենք կարգացել, այլ թէ ինչ ենք արել: Եթէ իմաստութեանը հետ չունենք անարատ վարք ու բարք. Եթէ իմաստուն լինելով՝ բարյական մարդ չենք, — երբէք չենք կարող ասել թէ կատարեալ մարդ ենք:

Բայց երկու տեսակ բարյականութիւն կայ. մէկը մեղ արգելում է չար գործ կատարելը, միւսը մեզ հրամայում է բարի գործ կատարել: Մէկը՝ տռանց միւսի անկատար է: Աստուծած իր պատուիրանքների մէջ մեզ երկու կերպով է խրատում: ասում է՝ այս արան այն մի անիր: Մենք էլ նրա պատուիրանքների մի մասը պէտք է յանցներս առանցնեն, միւսից պէտք է հրաժարանանան: Այս պատճառով քահանայի առաջը խոստովանուելիս «Մեղայի» մէջ մեզ խոնարհեցնելով Աստուծոյ առաջը՝ ասում ենք. «Զի ոչ զյանձնառականն կատարեցի, և ոչ ի հրաժարելեացն հեռացայ»: Մեղաւոր եմ, Տէր, ասում ենք, որովհետեւ ոչ այն եմ արել ինչ որ հրամայուած է ինձ անել, ոչ էլ նրանից եմ հեռացել, ինչ որ ինձ արգելուած է անել:

Մենակ հրաժարական պատուիրանքները կատարելը բաւական չէ. պէտք է որ յանձնառականներն էլ կատարենք: Ինչ օգուտ, եթէ դու ոչ ոքի չարութիւն չես անի, բայց ոչ ոքի էլ բարութիւն չես անի: Բաւական չէ որ ոչ ոքի ապտակ չխփես, հարկաւոր է որ ձեռքովդ մի քանի թշուառի արցունքները սրբես: Բաւական չէ, որ մարդ չսպանես: պէտք է որ մարդ էլ

ազատես սպանութիւնից: Բաւական չէ, որ չար ճանապարհներ ման չգտաս: Հարկաւոր է որ գնաս այն ամէն տեղը, ուր կանչում է քեզ քո պարտականութիւնը:

Հրամայելով՝ որ լինենք կատարեալ, Յիսուս աւելացնում է՝ ինչպէս և յեր երկնառոր Հայով կատարեալ է: Ասացի որ մեր երկնաւոր Հայորը հօգի է, սուրբ է: Մարդո, թէպէտ հօգի չէ, բայց ստեղծուած է աւելի հօգեսոր կեանքի, քան թէ մարմնաւոր կեանքի համար: Բայց մարմինը մեր մէջ իր ստոր ցանկութիւններով այնպէս է խեղդել հօգին, որ մեզանում հօգեսոր կեանքի նշոյլն անգամ՝ մնացել: Մեր կեանքը այնքան հօգեսոր չէ, որքան անասնական է: Մենք առաւօտը զարթում ենք՝ ինչ ուտենք, ինչ խմենք տուելով: Երեկոյին քնում ենք՝ ցերեկուայ անկարգ, զեղիս կեանքի ծանրութիւնից թմրած, հօգիներս մեռցրած: և եթէ մի քիչ կարզութիւն մնացել է մեզանում, այն էլ գործ ենք գնում հետեւալ օրուայ պլանները կազմելով:

Աստուած հօգիների Հայրն է և Նրա գերդաստանը հօգեսոր գերդաստան է: Իսկ մենք, երբ հօգով Աստուծոյ արդիք չենք, օրը քսան անգամ էլ որ նրան «Հայր մեր» անուանենք, Աստուած մեր Հայրը չէ և չի լինի: Սրանից երեսում է, որ մեր երկնաւոր Հօր պէս կատարեալ լինելու համար՝ մենք պէտք է ունենք ներքին սրբութիւն, մենք պէտք է սրտով սուրբ լինենք: «Սուրբ սիրտ հաստատիր մէջս, Աստուած», ձայն էր տալիս Դաւիթը թագաւորական գահի բարձրութիւնից: Անց կացաւ հազար տարի, և Գալիեայի

մի լերան գլխից Յիսուս քարոզումէր. «Երանին նրանց, որոնք սուրբ են սրտով»:

Բայց լաւ պէտք է հասկանանք «սուրբ» բառի բուն նշանակութիւնը: Սուրբ ասելով՝ մեզանում հասկանում են մեղք չունենալը. բայց միայն մեղք չունենալը գեռ սրբութիւն չէ: Ի՞նչպէս որ մենք միայն պատժից ազատ լինելով երջանիկ չենք, այլ միայն այն ժամանակն ենք մեզ երջանիկ համարում: Երբ պատժի ու տանջանքների փոխանակ՝ ուրախութիւն ենք վայելում: Այդպէս էլ մենք այն ժամանակ կը լինենք սուրբ, երբ մեղքի տեղը բռնումէ սրբութիւնը: Այսինքն՝ երբ սրբութիւնը մարդուս բնաւորութիւնն է գտանում: Իսկ եթէ սրտի մէջ սրբութիւն չկայ, անպատճառ կայ անսրբութիւն, որ առաջին գէպքում իսկոյն ինքն իրեն ցոյց է տալիս: Աեղքը, մոլութիւնը այն ժամանակ կարող է սրտից գուրս քշուած համարուել, երբ գրանց տեղը բուն են գնում այնտեղ սուրբ բնաւորութիւն և առաքինութիւն: Այն մարդը, որի մէջ չկայ առաքինութիւն, ոչ թէ մեղքից գէպի միւսն է գլորուսում: Իսկ մեր երկնաւոր Հօրը «նմանուելու» համար՝ մեզ ներքին փոփոխութիւն է հարկաւոր, հօգեսոր փոփոխութիւն է հարկաւոր: «Մինչև որ մարդս ջրից ու հօգուց չծնուի, ասում է Յիսուս, չի կարող մտնել երկնքի արքայութիւնը»: Իսկ հոգուց ժնուել—նշանակում է հօգեպէս ծնուել հօգեսոր կերպով ծնուել: Այսինքն՝ մեղք գործելու ընդունակութիւնը թողնել

և նորից իբրև հոգեռոր մարդ ծնուել։ Աստծուն «նմանուելու» միակ միջոցն ու հնարջ մեր հոգեռոր ծնունդն է։ Հոգեռոր ծնունդը մարդուս բնութեան մէջ մի հիմնական փոփոխութիւն է մտցնում և մեզ Աստուծոյ ընտանիքի, Նրա հոգեռոր գերդաստանի անդամ է շինում և այսպիսով մեզ համարձակութիւն է տալիս Նրան «Հայր» անուաննելու։ Ինչպէս որ դարձնոցի հնոցի մէջ դրուած երկաթը կրակի սաստկութիւնից մաքրուում է ժանգից և կարմրում կրակ դառնում։ այնպէս էլ այն մարդը, որ թողնում է աշխարհը և երեսը դարձնումէ դէպի Աստուած, մաքրուումէ իր հոգեռոր արատներից և փոխուումն նոր մարդ է դառնում։



## Փ Ա Ն Պ.

Շաբաթ վասն մարդոյ նղեւ, եւ ոչ եթէ մարդ վասն  
շաբաթու։

Մարկ. Բ. 27:



Եր եկեղեցին տարուայ մէջ շատ տօներ  
է կատարում։ և նրանք բոլորը սրբոց պատուի համար  
են սահմանուած։ Բայց բոլոր տօների մէջ կայ մէկը,  
որ սահմանուած է Աստծուն փառաւորելու համար։  
Այդ տօնը կրկնուում է ամէն շաբաթ և է կը անին։  
Բոլոր տօները սահմանել են կամ առաքեալները, կամ  
մեր Ա. հայրապետները։ իսկ կիւրակին սահմանել է ինքն  
Աստուած։ Կիւրակին բոլոր տօների մէջ այնքան է  
նշանաւոր, որ նրա անունով մի քանի նշանաւոր տօներ  
էլ համարուումեն կիւրակի։ Այդպիսի տօների մասին  
մեր տօնացոյցը ասումէ՝ «Այսօր կիւրակի է»։  
կիւրակին Աստուծոյ տուած տասը պատուիրանք-  
ներից մէկն է։ ուրեմն, ոչ մի տօն նրան չի կարող

Հաւասարուել։ Կիւրակին միւս բոլոր տօներից մէկ էլ նրանով է զանազանուում, որ ուրիշ տօներ՝ մի ազգ կատարում է, միւսը չէ կատարում։ իսկ կիւրակին տօնում են ոչ միայն բոլոր քրիստոնեայ ազգերը, այլ և մովսիսականներն (հրէաները) ու մահմէտականները (տաճիկները, պարսիկները), այն զանազանութիւնով որ՝ մահմէտականները տօնում են ուրբանը, մովսիսականները շաբաթ օրը, քրիստոնեաները՝ իւղանին։ Ամենքն էլ շաբաթուայ եօթն օրից մէկը նուիրում են Աստծուն։ Նրան նուիրուած օրերի անուններն էլ մի և նոյնն են ցոյց տալիս։ Այսպէս։

«Ուրբաթ» բառը ասորերէն է և նրանց լեզուում ասուում է լուսապատճեն, որ նշանակում է լուսն, այսինքն՝ լումն ստեղծագործութեան։

«Շաբաթ» բառը եբրայերէն է, և նշանակում է հանդիպուած։

«Կիւրակի» յունարէն է, և նշանակում է պէտունի, տէրունական, այսինքն՝ Տիրոջ համար որոշուած օր։

Աստուած վեց օրում աշխարհը ստեղծելուց յետոյ՝ եօթներորդ օրը հանգստացաւ և հրամայեց որ մարդիկ էլ վեց օր աշխատեն, իսկ եօթներորդ օրը Աստծուն նուիրեն։ Քրիստոսից յետոյ նրա առաքեալները, ի պատիւ նրա յարութեան, շաբաթուայ փոխանակ, որ վերջին օրն էր, սահմանեցին կիւրակին, որ առաջին օրն է \*):

\*). Կիւրակի գրաբարում ասուում է «միաշաբաթ», այսինքն՝ շաբաթուայ առաջին օր։ Այս է պատճառը, որ նրանից յետոյ եկող օրը ասուում է «երկուշաբաթ»։

Աստուած՝ ասում է. «Ցիշիր, որ սուրբ պահես շաբաթ օրը. վեց օր աշխատիր և կատարիր քո բոլոր գործերը. իսկ եօթներորդ օրը՝ հանգստեան օր է քո Տիրոջ համար։ Այդ օրը գործ մի շինիր՝ ոչ գոււ, ոչ քո որդիդ, ոչ քո աղջիկդ, ոչ քո ծառադ ու աղախինդ, ոչ քո եզդ ու էշդ, ոչ քո ամէն անասունդ, . . .»։

Այս հրամանը կատարուում էր տասը պատուիրանքները տալուց էլ առաջ։ Երբ իսրայէլացիները անապատումը մանանայ էին ժողովումն աեսնում ենք, որ նրանց իշխանները գալիս գանգատուում են Մովսէսին որ ժողովուրդը վեցերորդ օրը երկու օրուայ պաշար է ժողովում։ չէ որ ամէն օր միայն մէկ օրուայ պաշար պէտք է ժողովուի։ Մովսէսը նրանց պատասխանեց. «Վնաս չունի, վաղը հանգստեան սուրբ շաբաթն է»։ Աս պարզ ապացոյց է, որ շաբաթը հաստառուել է սուզակի աշխարհի ստեղծուելուց յետոյ։

Ասում ենք՝ եօթներորդ օրը Աստուած հանգստացաւ։ Շատ կուցաւ բարձրացաւ արգեօք, շատ բեռկեց, շատ աշխատեց ձեռքով ու սոքով, որ կարիք զգաց հանգստանալու։ Արգեօք երկնքին ստեղծելու վրայ շատ չարչարուեց, թէ երկրի, արևի, լուսնի ու անթիւ, անհամար աստղերի ստեղծելը աւելի յոգնեցրեց նրան, թէ՝ ծովերի ու ցամաքների, սարերի ու ձորերի ստեղծելը, — որ հանգստացաւ։ Կամ թէ, կարելի է, կաւից մարդ ստեղծելը նրանից շատ ժամանակ խլեց։

Այս, ինչ եմ ասում այդ բոլորը՝ իրանց ամէն

սարք ու կարգով Նա ստեղծեց, ամէն օր միայն մէկ խօսք ասելով. «Թող լինի լոյս», «Թող ջրերը բաժանուեն ցամաքներից», «Թող օգը լցուի թռչուններով ցամաքը՝ ամէն տեսակ կենդանիներով, ջրերը՝ ձկներով» — և ահա շունչ—կենդանիներ էր՝ որ վիտում էին վերև—ներքեւ, ձայներ էր՝ որ լսուում որոտում էին այն բոլոր տեղերում, ուր մի օր առաջ ձայն-ձպտուն չէր լսուում: Ինչ կար, ուրեմն, հանգստանալու, երբ Ստեղծողի խօսքն էր գործ տեսնում ոչ թէ ձեռքերն ու ոտքերը: Ուղիղն այն է՝ որ հանդադացաւ ասելով ուզում ենք ասել՝ վերջացրեց իր գործը, աշխարհի ստեղծագործութիւնը: Անկասկած, Աստուած կարող էր՝ փոխանակ վեց օրում ստեղծելու, մէկ օրում՝ մի ժամում մի բոլքում ստեղծել, երբ ստեղծողը իր քերանից գուրու եկող մէկ խօսքն էր: Բայց, ամէն օր մի բան միայն ստեղծելով, այն էլ՝ գեռ ամենահարկաւորը, յետոյ միւսները, —Աստուած ուզեց սովորեցնել, որ մենք էլ մեր գործերը կարգ ու կանոնով առաջ տանենք: Իսկ կարգ ու կանոն պահպանելը այնքան մեծ նշանակութիւն ունի, որ մի գիտնականի ասելուն պէս՝ առանց կարգ ու կանոնի մեր կեանքի երեք մասից երկուսը զուր է կորչում:

Ասաուծոյ պատուիրանքի միւս կէսը հրամայում է շաբաթ օրը ոչինչ գործ ՀՀինել: Եւ հրէաները, այդ հրամանի իսկական միտքը ըլ համկանալով, քիչ էր մնում: Որ կերակուր ծամելն էլ հրամանին հակառակ գործ համարէին, այնքան միտքը թողած՝ բառին էին

հետեւում: Բայց մենակ գործ ըլ շինելը՝ շաբաթուայ ճշմարիտ պահպանելը չէ ցոյց տալիս: Անգործութիւնը՝ փոխանակ շաբաթը սրբելու՝ եղծում, փչացնում է շաբաթը: Անգործութիւնը, պարապութիւնը ամէն չարութեանց ու անկարգութեանց մայրն է և պարապ մարգը գժոխիքի սիւներից մէկն է: Աշխատանքը օրհնուած է, պարապութիւնը՝ անիծուած:

Հրէից հասկացողութեամբ շաբաթ օրը ոչ միայն սովորական գործ չպէտք էր շինել, այլ և նրանց ուսուցիչները մի ցուցակ էին կազմել, որի մէջ արգելուում էր հազար ու մի տեսակ բաներ: Օրինակ՝ շաբաթ օրը չէր կարելի հագնել այնպիսի կօշիկներ, որոնց մէջ բեռու (մեխ) էր լինում ցցուած, որովհետեւ այդպիսի կօշիկները բեռն էր համարուում: Իսկ բեռու չունեցող կօշիկներ՝ կարելի էր հագնել: Այսի մարդ կարող էր տանել մէկ մեծ բոքոն (կլոր հաց), իսկ երկուով չէր կարելի, որովհետեւ երկուսի ձեռքին նոյն հացը բեռն էր համարուում:

Յիսուս, որ օրէնքների մասին ունեցած սխալ հասկացողութիւնը հրէից քահանաների ու փարիսեցիների երեսներովն էր տալիս, շաբաթուայ բուն նշանակութիւնը նրանց հասկացնելու համար՝ շաբաթ օրերն էլ, ուրիշ օրերի պէս, իր գործն էր տեսնում: Մէկ անգամ, շաբաթ օրով, Յիսուս իր աշակերտներով անցնում էր հանգերովը, հասած արտերի կողմը: Աշակերտները, որ երկար ժամանակ անօթի էին մնացել, էլ չկարողանալով գիմանալ սաստիկ քաղցածութեանը՝

սկսեցին հասկեր քաղել, բռներումը փշրել, քամու տալ և ցորենը ուտել: Փարիսեցիների լրտեսները ծածուկ հետեւում էին Յիսուսին՝ տեսնելու արդեօք այդ օրը նա օրէնքի հակառակ բան չի անի, որ մատըներին փաթաթեն ու մեղաւոր դուրս բերեն նրան ժողովրդի ու օրէնքի առաջը: Հենց որ նրանք աշակերտների արածը տեսան, մօտեցան Յիսուսին. «Տես՝ ինչ են անում աշակերտներդ, այնպիսի բան են անում, ինչ որ արգելուած է անել շաբաթ օրը»: Թէպէտ օրէնքով արգելուած էր շաբաթ օրով հասկ կտրելն ու ջարդելը, բայց ռաբբիները զրանից մի քիչ էլ հեռու էին գնացել. նրանց կարծիքով հասկ կտրելը կարելի էր հնձի տեղ ընդունել հասկ տրորելն էլ՝ հասկ ջարգելու տեղ ընդունել: Այս պատճառով աշակերտների արածը՝ քարկոծուելու արժանի մեղք էին համարում:

Յիսուս նրանց պատասխանեց. «Լառ, այդ որ ասում էք, ինչո՞ւ այն էլ չէք միտքներդ բերումն թէ ինչ արեց Դաւիթը և իր հետ եղած մարդիկ, երբ քաղցել էին: Ինչպէս եղաւ, որ նա մտաւ տաճարը ու կերաւ այն հայր, որ միայն քահանաները կարող էին ուտել, և ոչ աշխարհականները: Իսկ եթէ Դաւիթը, այդ ձեր սիրած մեծ ու սուրբ թագաւորը կարող էր օրէնքի հակառակ վարուել, այն էլ շաբաթ օրը, և դարձեալ անմեղ է համարուում:— Հապա իմ խեղճ աշակերտները ինչո՞ւ պէտք է մեղաւոր համարուեն, երբ իրանք էլ սովից տանջուած՝ հասկ են փշրում ու ցորենն ուտում»: Հրէից անհասկացողութիւնը այն

տեղն էր հասել, որ շաբաթ օրով մահից մարդ ազատելն էլ մեղք էին համարում: Եւ, երբ Յիսուս այդ օրերին բժշկութիւններ էր անում, մէկի չորացած ձեռքն էր առողջացնում, միւսի բորոտութիւնն էր սրբում: այս կոյրի ազքն էր բայց անում, այն անդամալոյթի անդամներն էր ամրացնում և փարիսեցիները կատաղութիւններից իրանց անելիքը չգիտէին: այն ժամանակ Յիսուս նրանց ասում էր. «Ի՞նչ էք կարծում շաբաթ օրով հոգի ապրեցնելն է լաւ, թէ հոգի կորցնելը բարի աստուածահամոյ գործ անելն է լաւ, թէ անգործ նստելը: Ո՛ղորմելիներ, լաւ մտածեցէք շաբաթն է ճարդուած համար սարչածուած, նէ ճաշովը շաբաթն այ համար. օրէնքն է մեղ համար, թէ մենք ենք օրէնքի համար, շորենն են մեղ համար, թէ մենք շորերի համար: Լաւ իմանաք, որ ձեզ հետ խօսողը՝ ինչպէս ձեր տէրն է, ինչպէս ժամանակի ու յաւիտենականութեան տէրն է, — այնպէս էլ ամէն օրուայ ու շաբաթուայ տէրն է»:

Պատմում են որ՝ մի և նոյն օրը Յիսուս տեսաւ մի մարդ, որ գործ էր շինում: Նա ասեց նրան, «Ո՛վ մարդ եթէ գիտես՝ ինչ ես անում երանի քեզ. իսկ եթէ չգիտես՝ ինչ ես անում վայ քեզ»: Սրանով Յիսուս ուզում էր ասել. Ո՛վ մարդ, եթէ հաւատիդ պատուէրը գիտենալով ես շաբաթ օրով գործ շինում: Երանի քեզ, որովհետեւ արածդ ուզիդ է. իսկ եթէ պատուէրը չհասկանալով ես անում վայ քեզ, որովհետեւ արածդ սիսալ է: Ահա մի բացարութիւն, որին ուրիշ ոչինչ չէ մնում աւելացնելու:

Այժմ մեր մասին խօսենք։ Մենք հայերս որ լուսաւորուած ենք աւետարանի լուսով, առաջին քրիստոնեայ ազգն ենք, և շաբաթուայ առաջին օրը՝ կիրակին, մեզ համար համգսուեան օր ենք ընդունել, — կարող ենք պարծենալ, որ այդ օրուայ նշանակութիւնը աւելի լաւ ենք հասկացել, քան հրեաները։ Նաբաթուայ վեց օրը գլուխներս կախ՝ ամենքս մեր բանին ու գործին ենք հետեւում։ մեր ապրուստը հոգում։ Բացուում է կիրակին, մեր տէր Յիսուս Քրիստոսի յարութեան հրաշալի օրը։ 0՝ ինչ օր է այդ օր հնած օրը։ Ինչ մոքեր, ինչ յիշատակներ է զարթեցնում դա ամէն քրիստոնէի մէջ։ Մեր ամենքիս փրկութեան համար տանջուած, չարչարուած և աւազակների մէջ տեղը խաչուած Յիսուսի յարութեան վառաւոր օրը, երկու բանով պէտք է զբաղուենք — Աստուծոյ հրամանը կատարելով և մեր փրկութիւնը տօնելով։ Այդ օրը եկեղեցին մէզ Ա. Պատարագի է հրաւիրում։ Հրաւիրում է որ մեր աչքով տեսնենք մեզ փրկողի մահը, այն սարսափելի անցքը, որ երկար ու ձիգ տարիներ առաջ պատահել է Գողգոթայի վրայ։ Մահուան բաժակը, որ Յիսուս խաչի վրայ խմելուց առաջ՝ Սիօն սարի վերնատանը խմեց, պէտք է բարձրանայ մեր աչքի առաջը, — այն բաժակը, որ մեզ համար կեանքի բաժակ գարձաւ։ Ահա այսպիսի հոգեոր ճաշի, այսպիսի շքեղ հանդիսի է հրաւիրում մեզ եկեղեցին։

Եկեղեցու հրաւերը շատ վաղ է սկսուում — լուսածագին։ Հնչուում է տաճարի կամարներում Ա. Ներ-

սէս Շնորհալու շնորհալի երգի ձայնը։ Զարթել է մեծ հայրապետը գիշերով, Զէյթունի կողմերը, Կիլիկիայի ժայռերում։ զարթել են նրա հետ և իր սուրբ սրտի աստուածային զգացմունքները. զարկում է սրտի թելերին, ինչպէս ալտիոսիկ քնարի լարերին։ Եւ ի՞նչ է ուզում սուրբ ծերունին, ի՞նչ է ուզում ազգի հայորապետը։ Ուզում է մի ընդհանուր երգով փառաբանել Ստեղծողին, ուզում է շնորհակալութիւն անել Նորան գիշերային հանգիստ քնի համար։ ուզում է խնդրել նրանից որ կարողանայ առաջիկայ օրը խաղաղութեամբ անցկացնել։ Ծտերից ու ամէն տեսակ թոշնիկներից առաջ է կամենում լսելի առնելի իր ցանկութիւնները։ կամենում է «Գիշերով յիշել Տիրոջ անունը»։ Իր անհուն սիրտը բուրվառ է շինել և անուշահոտ ինկան ծուխն ու՝ բոյրը բարձրացնում է գէպի Արարչի գոհհը։

«Զարթիք, փառք իմ զարթիք, և ես զարթեայց առաւոտուց»։ Զէ ասում։ Զարթեցէք, իմ որդիք։ ասում է՝ Զարթիք, իմ փառք, իմ պարծանք, իմ ուրախութիւն։ Զարթեցէք, ծերք և տղայք. զարթեցէք, երիտասարդք և կուսանք, զարթեցէք։ Զարթեցէք, հոգով՝ հարսներ, որ սպասում էք սուրբ փեսայի գալուն։ Զարթեցէք, յապտերներդ պատրաստեցէք։ Ճիթի փոխանակ ջերմ արցունքներ լցրէք։ Եկէք, ահ ու դոզով աղօթքի կանգնենք և մեր մեղքերը խոստովանուենք։ Փեսան ողորման է։ կը ների մեր մեղքերը։ զարթեցէք»։

Այսպէս, եկեղեցին լեզու դարձած՝ իր որդիքն է կանչում, հրաւիրում։ մերթ խնդրելով, մերթ հըրամայելով։ Այս, որդիքը ուրիշ աշխարհումն էն, երադների աշխարհում։ ինտէլիգէնտ ժողովուրդը, բարձր դասակարգը, լուսաղէմին է անկողին մտել և նա շատ էլ օրերի հաշիւը չէ պահում։ նրա համար կամ կիրակի չկայ, կամ հէնց ամէն օր էլ կիրակի է։ իսկ եկեղեցին, հաւատը նբա մոռքի անկիւնովն էլ չեն անցնում։ Վաճառական ժողովուրդը առաւտը կանուխ խանութ գնալիք չունի։ կակուղ բարձի վրայ շունչ է տալիս, շունչ առնում շատ էլ եկեղեցին ճանաչում է, բայց ինչ գրա ժամանակն է, այնտեղ էլ հօ առ ու տուր չկայ։ Արհեստաւոր ժողովուրդը որ անհամբեր լուսանալուն էր սպասում, արդէն ոտքի վրայ է։ բայց եկեղեցին ուրիշներն էլ կարող են գնալ հապա գինետները ո՞ր օրուայ համար են։ իսկ ամէն տեսակ խառն ամբոխը—դէպի հրապարակներն ու բազարն են շտապում՝ ծախելու, առնելու կամ աննպատակ թափառելու։ իսկ այնտեղ Եկեղեցումը, տիրացուները բեմի առաջը կանգնած՝ ծանր ու բարակ երգում են։ Վասն ժողովրդեանս, որք մոտանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաքեսցուք։ Եւ այս ամէնը լինումէ բոլորովին դատարկ եկեղեցում չորս պատերի մէջ։

Ուրեմն հայ ժողովուրդը ի՞նչպէս է հասկանում հանգստեան օրը, — մի մասը մինչև ճաշ, միւսը մինչև նախաճաշ՝ անուշ քնի մէջ են։ իսկ այնտեղ պաշտօնն

էլ է վերջանում, պատարագն էլ։ Ոտքի վրայ եղածներից մի մասը բազարն է շտապում միւսը՝ գինետունը։ Եւ, քահանան աղօթքների մէջ, սարկաւագը քարոզների մէջ, պատարագիչը անարիւն ջոհի առաջը՝ խնդրուածքներ է որ անում են այն ժողովրդի համար, որ միանգամցն կորցրել է եկեղեցու ճանապարհը։

Խորայէլացի ժողովուրդը, որ շաբաթ օրը որ և է գործ շինելուց այնպէս էր հրաժարում, ինչպէս մենք ստանայից, իմ կարծիքով, աւելի լաւ էր անում քան թէ մենք, որ կիրակի օրը անում ենք ամէն անկարգ բան, գնում ենք ամէն անկարգ տեղ, նայում ենք ամէն անկարգ տեսարանի, ականջ ենք գնում ամէն անկարգ անկարգ խօսք ու զրոյցի, դուրս ենք հանում բերաններիցս ամէն անվայել խօսք ու հայհոյանք, նրատում ենք անչափ ու անկարգ կեր ու խումի, ֆոխանակ մեզ այդ օրը կարգին պահելու, զսպելու՝ մենք հենց այդ օրն ենք մեզ ամէն բան թոյլ տալիս։ Եւ այս մեր անկարգ արարունենքով մենք ոչ թէ պատւում ու փառաւորում ենք Աստուծոյ անունը, այլ անարգում ու կողովում ենք Նորանից իր փառքը։

Եթէ լաւ քննենք դատարանները մտնող գանգատները, գեղատները մտնող գեղատոմները, գերեզմանատները մտնող գիտեները, — այն ժամանակ շատ հեշտ կը նկատենք, որ՝ այն կոիւները, որոնց մասին գանգատաներ են եղել, այն հիւանդութիւնները, որոնց պատճառով գեղատոմներ են գրուել, այն սպանու-

թիւնները, որոնցից մահ է առաջացել — գրանք  
բոլորը մեծ մասամբ պատահել են կիրակի օրե-  
րը: Այս բոլորը ցոյց է տալիս որ՝ շաբաթը մի ան-  
գամ՝ հանգստութեան համար սահմանուած օրը մենք  
անց ենք կացնում մարմնաւոր ու հոգեւոր տանջանք-  
ների մէջ: Այս օրը սահմանուած է սրբելու համար,  
մենք պղծում ենք. սահմանուած է Աստծուն նուիրե-  
լու համար, մենք նուիրում ենք սատանային:

Ի՞նչ է նշանակում կիրակին նուիրել Աստու-  
ծոյն. նշանակում է՝ այդ օրը անցկացնել Աստ-  
ուածահամոյ գործերի մէջ. իսկ Աստծուն հաճելի գոր-  
ծերն են՝ մի կողմ թողնել մարմնապաշտութիւնը,  
մարմնի ցանկութիւնները կատարելը, զբաղուել աստ-  
ուածպաշտութեամբ ու հոգեւոր գործերով: Օրհնու-  
նութիւն մեր ս. հայրապետներին, օրհնուի նրանց յի-  
շատակը: Նրանք արիւն — քրտինք թափեցին, կեանք-  
ները մաշեցին, և սրբազան ծէսերով ու արարողու-  
թիւններով այնպէս պայծառացրին մեր եկեղեցին, որ  
նա զարձաւ մի երկնային դրախտ: Խնըը Քրիստոս այդ  
գրախտի պլանը քաշեց, Աստուած վերևից նրա հիմ-  
քըն օրհնեց, Թագէսսն ու Բարթուղիմէսը ծառերը  
անկեցին, Լուսաւորիչը ցանկով սկսեց, թարգմանիչ-  
ները ակօսներ բաց արին, Վարդանանք իրանց արիւնով  
ջրեցին (ոռոգեցին), Շնորհալին դանակն առաւ յօտեց.  
Հայ ազգը պտուղները վայելեց: Ահա թէ ինչ է եկեղեցին,  
նա մեր հոգեւոր կեանքի վառարանն է, աշխարհային  
աղմուկներից զերծ մնալու խաղաղ նաւահանգիստն է:

Եկեղեցի գնալը, պաշտամունքի ու ո. պատարա-  
գի ներկայ լինելը, իր խնգրուածքը քահանայի ալօթք-  
ների հետ խառնելը, Ա. Աւետարանի կարդալու միջո-  
ցին աւետարեր Յիսուսին ականջ գնելը: — այս բոլորը  
ամէն քրիստոնէի սրբազն պարտականութիւնն է:  
Յիրաւի ինչ արժէ մսրդուս համար՝ շաբաթուայ մէջ  
միերկու ժամ կտրուել աշխարհից ու նրա հրապոյր-  
ներից, մտնել Աստուծոյ տունը, որաեղ ականջիդ հա-  
սած ամէն ձայն՝ հոգուդ հետ է խօսում, որաեղ հե-  
տըդ խօսողը Աստուած է և իր սիրելիները: Ինչպէս  
մնշուած ու թմրած հոգիդ մի փոքր շարժուում ու  
թարմանուում է. ինչպէս թեթևացած ես զգում քեզ:

Կիրակին եկեղեցում բաց է անում մեր հոգու  
առաջը սրբոց ժողովաբանը: Այդ ժողովաբանի սուրբ  
անդամներին թէպէտ մարմնաւոր ոչքով չենք տես-  
նում, բայց նրանց սրտաշարժ խօսքերը, նրանց հոգե-  
պարար մոքերը, որոնք եկեղեցու կամարները թնդա-  
ցնելուց առաջ՝ իրանց խցերի պատերն են ցնցել —  
պարզ ու որոշ համում են մեր ականջին ու մեզ  
զմայլեցնում: Նրանք թեաւորում են մեր հոգին, որ այդ  
միջոցին նեղ գտնելով իր համար տաճարի ցած կամար-  
ները, երկնային բարձր կամարներն է սլանում: Հայոց եր-  
կրի ամէն նահանգ, սմէն գաւառունի այդ ժողովաբա-  
նում իր արժանաւորներկայացուցիչը: Ասհակն ու Աեսրո-  
պը՝ իրանց աշակերտներով, Խորհնացին՝ իր ընկերներով,  
երկնային բանաստեղծների, հոգեւոր երգիչների մի  
ստուար բազմութիւն թնդացնում են եկեղեցին իրանց

սրտայոյզ երգերով, տաղերով ու մեղեդիներով:

Կիրակի օրը ժամ—պատարագ տեսանելը այնքան մեծ նշանակութիւն է ունեցել հայի համար, որ քահանայի առաջը խոստովանուողը այս էլ է եղել ասելիս. «Կիրակի օրը եկեղեցի չեմ գնացել» մեղաց Աստուծոյ ։ Ոչ ոք չի կարող կիրակի օրով եկեղեցի չգնալը արդարացնել նրանով որ այնտեղ լաւ ժամերգութիւն չկայ, հոգեւորականների մէջ կարգ—կանոն չկայ, լաւ ձայնաւոր երգիչներ չկան և այլն։ Դրանք այնպիսի հանգամանքներ են, որ մեզ չեն կարող մեր Աստծուց հեռացնելու պատճառ դառնալ։ Դու ոչ մի-այն ինքդ պէտք է եկեղեցի յաճախես, այլ և շատ սիրուն բան արած կը լինես, եթէ մատաղ մանուկները էլ հետդ տանես։ Եթէ դու եկեղեցասիրութիւնը, քո պատերի գովական սովորութիւններն ու ծէսերը, սրբազն երգեցողութեան, աւետարանի փրկարար խօսքերին, քահանայի հոգեշահ քարոզներին ականջ դնելը մանկութիւնից հաստատես երեխայիդ անարատ սըրտումը, պէտք է հաւատացած լինես, որ մեծ գործ արած կը լինես Աստուծոյ տնտեսութեան մէջ։

Բազդաւոր ժամանակներում էին ապրում մեր հայրերը։ Պապենական սովորութեան համաձայն՝ հացի նստելիս, հացից վեր կենալիս, երեխաները պէտք է ոտքի կանգնած, ձեռնամած՝ «Հայր մերն» ասէին։ Իսկ երեկոյեան, անկողին մոհելուց առաջ՝ պապը, տառը, ծնողները, որդիք, թոռներ միասին կանգնում «Եկես-ցէ», և «Հաւատով խոստովանիմքն» էին ասում և ա-

պա երեսները խաչակնքելով՝ անկողին մտնում։ Ինչ երկիւղածութիւն, ինչ ջերմեռանգութիւն էր տիրապետում մանուկների սրտին։ Այստեղ էր ահա կեանքի համն ու հոտը, այստեղ էր օջախի սրբութիւնն ու հաստատութիւնը, այստեղ էր պատիւն ու պատկառանքը. այստեղ ողջ տունը մի հոգի դարձած՝ կանգնում էր տիրոջ առաջը։ Իսկ հիմայ ինչպէս կորցրել ենք ձանապարհներս, ինչպէս մոռացել հաւատներս, ինչպէս փոխուել են հոգիներս, ինչպէս սառել դատարկուել, ծխոտուել..

Կիրակի օրը քրիստոնեան տանը պէտք է կարգայ կրօնական, բարոյական գրուածքներ, որոնց մէջ իր համար հոգեւոր կերակուր կարող է գտնուել։ Թող կարգայ հայ—քրիստոնեան՝ Ս. Աւետարանը, Յիսուսի վերջին շաբաթը, թող կարգայ «Մարգարիտ արքայութեան երկնից», «Զարչարանքի շաբաթը», թող կարգայ «Իրախատի ընտանիքը», «Մրմունջը Յիսուսի» և ուրիշ այս բովանդակութեամբ գրքեր։

Քրիստոնէի պարոքն է կիրակի օրերը մանաւանդ յիշել չքաւորներին, աղքատներին. օգնել նրանց թեթևացնել նրանց վիճակը, ինչով որ կարելի է տեսութիւն գնալ հիւանդներին, բանտարկեալներին և առ հասարակ օրը անցկացնել բարեգործութիւնով։ Չմոռանանք, որ եթէ կիրակի օրը սովորական գործով պարապել անվայել է, աւելի անվայել են զանազան անկարգ զուարձութիւնները, որոնցով մարդիկ ուզում են ապանել ժամանակը։

ինքը Պօղոս առաքեալը ողորմութիւն տալը հրա-  
մայումէ աւելի կիրակի օրը, որ տուողների մէջ աւե-  
լի եռանդ շարժի: Կիրակին այն պատճառով է զրա-  
համար յարմարաւոր օր համարուում որ այդ օրը գա-  
դարումէ ամէն աշխատանք և հոգին հանգստանում է,  
իսկ գլխաւոր պատճառն այն է, որ այդ օրը մենք  
շատ շնորհների ենք արժանացել: Կիրակի օրը խոր-  
տակուեց մահը, ջնջուեց նզովքը, ոչնչացաւ մեղքը,  
կործանուեցին դժոխքի գռները. Աստուած հաշտուեց  
մարդու հետ, մարդկային ազգը լաւագոյն վիճակի  
արժանացաւ, և արեգակը տեսաւ սրանչելի տեսարան:  
— այն է՝ որ մարդը դարձաւ անմահ: Առաքեալը այս-  
պէս հանդիսացնելով կիրակին, կարծես, ասումէ ամեն  
մէկիս. «Մտածիր, ով մարդ, թէ ինչքան բազմաթիւ  
ու մեծ շնորհների ես արժանացել դու այս օրը,  
ինչպիսի չարիքներից ես փրկուել, ինչ էիր առաջ,  
և ինչ ես հիմա»: Մենք սովոր ենք շքեղ հանդէսնե-  
րով ու ճոխ սեղաններով տօնել մեր ծննդեան օրը.  
ինչքան աւելի պէտք է պատռենք այն օրը, որին կա-  
րելի է անուանել մարդկային բնութեան ծննդեան օր:  
Որովհետեւ մենք կորած էինք՝ գտնուեցանք, մեռած  
էինք՝ կենդանացանք, թշնամի էինք՝ հաշտուեցանք:  
Ուրեմն, մենք պէտք է տօնենք այս օրը ոչ թէ չափա-  
զանց կերուխումով, այլ հոգեւոր պատիւ տալով սրան,  
այն է՝ մեր չքաւոր եղբայրներին ամէն դէպքում օգ-  
նելով: Այն Աստուածը, որ ասեց՝ թող երկիրը բուս-  
ցնի ամէն տեսակ խոտ ու բոյս՝ միթէ չէր կարող

հրամայել, որ աշխարհի ամէն կողմը ոսկու գետեր  
վաղէին: Բայց նա չկամեցաւ այս այլ թողեց որ շա-  
տերը խեղճ ապրեն թէ իրանց և թէ մեր օգտի հա-  
մար: Թողեց որ՝ ով իրան մի բանում մեղաւոր է ըզ-  
գում: միսիթարուի նրանով որ Աստուած նրա կողքին  
չքաւորներ ու աղքատներ է դրել, որպէս զի նրանց  
վրայով ինչպէս մի կամրջով, անցնի, գնայ երկնքի ար-  
քայութիւնը: Ինքն Աստուած էլ, երբ աշխարհ եկաւ  
ու մարդկանց մէջ բնակեց, հարկաւոր համարեց ամէն  
խեղճերի հոգու քաշել: Նա, որ մէկ խօսքով ստեղ-  
ծում էր ամէն բան, նաև որ հրաշալի կերպով հացե-  
րը շատացրեց,—կարող էր մի բոպէսւմ լոյս գցել հա-  
զարաւոր գանձերո բայց չորեց. այլ հրամայեց իր ա-  
շակերտներին, որ մի արկղ պահեն, ժողովրդից ստա-  
ցած փողերը մէջը ժողովեն և այն փողերով օգնեն  
խեղճերին: Ահա թէ ում օրինակին պէտք է հետեւնք  
մենք ամէնքս, եթէ կամենում ենք ամենողորմ և մար-  
դասէր Յիսուսին ոչ թէ դատաւոր, այլ պարտապան  
տեսնել հանդերձեալ կեանքում:

Երբ կսրբենք ու կը սրբացնենք կիրակին սուրբ  
մտածութիւններով, սուրբ ճանապարհներով, սուրբ գոր-  
ծերով,—այն ժամանակ հասկացած կը լինենք այդ  
օրուայ մեծ նշանակութիւնը, և միայն այն ժամանակ  
կատարած կը լինենք Աստուծոյ պատուիրանքը, որ  
ասումէ: Յիշեալ սրբել զօր շաբաթու»:



## ՀԵՂԻՆՈՒԿԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

---


1. ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ, 1892,  
36. երես. գինն է 8 կոպէկ.
  2. ԶԱՐՑՄԱՆՔԻ ՇՐՋԱԹԸ, 1894. 80 երես,  
գինը՝ 15 կոպէկ.
  3. ՊԱՐՁ ՔԱՐՈՉՆԵՐ, 1895. երես, 75
- 

ՑՊԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ՝

1. ՏԱՐԵՐՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ.
2. ԲԵԹԼԵՀԵՄԻՑ ՄԻՆՉԵՒ ԶԻԹԵՆԵԱՑ ԼԵՌԸ.

ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐԱՆՈՐ ԿԵԱՆՔԸ.





972C 154



871

0027749

874

ՀՀ Ազգային գրադարան



NL0027719

